

b u. h o s o b u u

۴۶

ԿԵՐՆՔԻ

ԵՐԱՎԵՐԸ

ԳԻՒՆԻ Ե 35 ԿՈՊԵԿ



Phi Beta U

Առաջնախաղ «Հասպերամասո», Ելիզավ. 17
1912

1912

891.99

ku - 66

6 NOV 2011

891.22

Դ-66

ԵԱՀՆԱՏՈՒԱՆ

ԱՄ.

ԿԵԱՆՔԻ=

=ԾԱՂՐԸ

1933



ԹԻՖԼԻՍ

Արագատիստիոն ՀՀԱՊԼԻԱՆԻԱՅԻ, Ելիզաւ. 17
1912



I

Գնացքն արդէն կայարանից հեռացել էր:
 Ճանապարհորդներն իրենց տեղերն էին գրաւել:
 Երկաթուղու գնացքի ՚՚ կարգի հետեւի կառքի
 լուսամուտի տակ միայն մի հոգու համար նըս-
 տելատեղ կար, ուր տեղաւորւել էր մի անծա-
 նօթ ճանապարհորդ: Տեղը շատ անյարմար էր:
 Իւրաքանչիւր անգամ ներս և դուրս անող ծա-
 ռայողի կամ ճանապարհորդի գուան բաց ու խուփ
 անելն անծանօթ ճանապարհորդի համար անա-
 խորժ ցուրտ էր ներս բերում, որն այնպէս ու-
 ղիղ վշում էր անծանօթի գէմքին, ասես, ճա-
 կատագրօրէն չէր թոյլ տալիս նրա մինչև ոս-
 կորների ծուծը մրսած մարմինը տաքացնել: Նա
 ոչ ոքից չէր գժգոհում, միայն ամեն անգամ
 խնդրում էր գուռը շուտ փակել, իսկ ինքն ա-
 ռանց վերաբերուն ու դլարկը հանելու կծկած
 էր իր տեղում: Նա կուչ եկած մտածում էր,
 թէ ինչու իր խնդիրը շատ քչերն էին կատա-

բում: Մտածում էր, նաև ինքն էլ իր հարցերին պատասխան գտնում: Նա շատ լաւ դիտէր, որ ուրիշների համար միենոյն էր, թէ ինքն ինչ դրութեան մէջ է գտնուում: Ուրիշն օտարի մեռելը խաղալով կը թաղէ. չէ՞ որ այդ բանից նրանք անձնական շահ չունեն: Նա դիտէր և, որ իւրաքանչիւր մարդ դիմացինին շափում է իր իսկ դրութեամբ, ուստի զարմանալի չէր, որ իր նըման խնդրողները քիչ ուշադրութեան պիտի արժանային: Այդ էր պատճառը, որ անձանօթն առանց դժոխելու, կարծես, որպէս դռնապան, գնացող եկողի յետեկից ամեն անդամ վեր էր կենում ու դուռը ծածկում: Ոչ ոք կեանքում այնքան չէ հոգալու մարդու մասին, որչափ ինքը—հոգո ունեցողը: Այդ շատ պարզ էր նրա համար. և նա ինքն էր հեռացնում իրանից ուրիշների պատճառած անախորժութիւնները:

Դիմացի երկու քնելատեղերում, դէմ առ դէմ, նախալիս իրանց համար փոած անկողինների վրայ ձգւած-պառկած էին երկու երիտասարդ զոյգեր: Նրանցից մէկը թխաղէմ մի պարոն էր, մաքուր արտաքինով և դէմքի խելացի արտայայտութեամբ. իսկ միւսը՝ կարմրաթշիկ, մաքուր ու համեստ հագնւած մի միջահասակ աղջիկ: Ինչպէս երկում էր նրանց արտաքինից, երկուսն էլ ուսանողներ պիտի լինէին: Նրանց վերկում, բարձրացրած երկու ննջելատեղերում դէմ առ դէմ պառկած էին երկու գիւղացիներ:

Նըանց հազուստների հազար ծւէն լաթերը, կեղափի ու մուրի մէջ կորած մարմիններն ու շորերը, անախորժ ու անքաղաքավարի շարժումներն ու խօսակցութիւնը զգւանք էին յարուցանում ներքեկի, ըստ երկոյթին, բախտաւոր ընտանիքների գաւակների մէջ, որոնք երկի դիպւածով էին ընկել III կառք:

Մարգարիտ, ախ, ինչ լաւ կլինէր կամ մենք շուտով ազատւէինք դրանցից, կամ դրանք մեզանից. զգւելի գարշահոտութիւն է փչում, տանել չեմ կարող. նայելն անգամ ճաշակ է փչացնում: Ինձ թւում է, թէ դրանց գոյութիւնը թիւրիմացութիւն է. նախ, որ տանջանքից և վատ կեանքից բացի ուրիշ բաժին չունեն դըրանք. և երկրորդ՝ ուրիշներին էլ զգւանք պատճառում,—խօսեց երիտասարդ ուսանողը:

Այս, ճիշտ ես ասում,—պատասխանեց Մարգարիտը, սակայն չմոռանաս, որ գրանք էլ մեզպէս մարդիկ են, աննպաստ հանգամանքների շնորհիւ այս գրութիւնն են տանում: Քեզ այնպէս է թւում, իսկ ինձ՝ թէ մեզ պէս մարդկանց ձեռքով և աննպաստ հանգամանքների ճանկերից այս գառն օրն են ապրում նրանք: Դու կարծում ես, թէ նրանք կուղէին այս գըրութիւնը տանել—ճար չունեն: Զախող պայմանները, մաքի խաւարն ու տնտեսապէս ընկած գրութիւնը մեզ պէս միլիօնաւորներից են ստեղծել և կստեղծեն այդպիսիներ: Ես երբէք չեմ

զգւում, այլ խղճում եմ դրանց:

—Եհ, Մարգարիտ, ես այդ դրա համար չասացի, որ դու գարձեալ քո փիլիսոփայութիւններն սկսես: Զի՞ որ ներկայ պատկերը տհաճութիւն է շարժում, որը ժխտել չես կարող, հետեւապէս ներկայ դէպրում անելիքի մասին չեն խօսի, խօսելով էլ գնացքի մէջ ոչնչի չես հասնի ուրիշների բարօրութեան գործում, այն ինչ, մենք զգւանքից չենք ազատուում, որն այնպէս թանկ է նստելու մեր կեանքի և ճաշակի վրայ: Համաձայնիր ինձ հետ, որ անտանելի է այս գարշահոտութեան մէջ մնալ մինչև տեղ հասնելներս. կարելի է դիմել կանդուկտորին, որ մեզ այստեղից տեղափոխի կամ II կառք և կամ III կառքի կանացի բաժանմունքը, ուր քիչ թէ շատ մաքուր է թէ օգը և թէ ամեն ինչ:

— Կոստիա, այսպէս էր երիտասարդ ուսանողի անունը, թող, խնդրում եմ, ես այսօր երբէք տրամադրութիւն չունեմ վիճելու։ Մենք էլ այս բոլորի պէս մարդիկ ենք, — ասաց Մարգարիտը մեզմ ու սիրալիր դիմելով նրան։ — ոչինչ, չենք մեռնի, այստեղ էլ կարող ենք անցկացնել։ Իեռու չէ մեր տեղը շուտով կը հասնենք։ Համաձայն ես, հա, ծիծաղկոտ ու գրաւիչ արտայայտութեամբ իր հայեացքը տարածեց Կոստիայի վրայ։

Կոստիան այլ ևս չխօսեց, նա համաձայնեց
մնալ ու տանել այն անտանելի ու զգելի օդը:

Մարգարտի համոզիչ տոնը, ձայնի՝ որպէս դայլայլ, շարժումները, գեղեցիկ կրծքի թռթռալէն վեր ու վար անելը, դէմքի նուրբ կաշւի կարմիր ու գրաւիչ կերպարանքը, որպէս մագնիս, մեխել էին կոստիայի ակնապիշ հայեացքը։ Պատահում են ըոպէներ, երբ մարդու հրաշքներ գործող հանճարեղ միտքը և, որպէս Աստւած, մարդու ուժգին հոգին, լուսմ են—պապանձում ու տեղի տալիս զգացումների թափին, որ անապատների և ծովերի հսկայ ալեկոծող քամիներից էլ ուժեղ են. նրանք անում են իրենց անելին։ Եւ կոստիան լուռ և խոնարհ, որպէս գերի, համաձայն էր Մարգարտի հրամայող պահանջներին ենթարկել։ Քիչ առաջ տեղի ունեցած խօսակցութիւնն արդէն չքացել էր, տեղի էր տւել խօսուն-խօսուն սրտերի զրոյցին։ Մեղմ ու սիրալիր վերաբերմունքների քնքշութիւնը երկուսի սրտերի և հոգիների իրար անձնատուր լինելու—սիրային զոյգերի պատկերն էին արտացոլում։ Լուռ գրութեան մատնելիս, նրանց միմիկայով ու քաղցրահամբոյր հայեացքներն իրարից չէին հեռանում։ Նրանք թէ նախկին և թէ յետագայ խօսակցութիւնների ժամանակ այնքան էին տարւել միմեանցով, որ չէին նկատել դէմ առ դէմ կծկւած անծանօթ ճանապարհողի իրենց վրայ սկսուած հետաքրքիր և ուսումնասիրող հայեացքը։

Օրիորդն ուզեց մի փոքր ուղղւել և ուսե-

ըով բարձը վեր հրելով՝ վերևանալ. Այդ ժամանակ նրա գլխատակի բմբուկէ փափուկ բարձը գլորեց ու գետին ընկաւ. Մարգարիտն ուզեց կռանալ վերցնելու բարձը, բայց չյաջողեցրեց, որովհետև մինչ նա կը կռանար, մեքենայի արագութեամբ կոստիան բարձրացրեց ու տեղը դրեց բարձը. Այդ կռանալու ժամանակ Մարգարիտի և անծանօթ ճանապարհորդի հայեացքները իրար հանդիպեցին: Մարգարիտը կռացաւ և ինչ որ բան փափսաց կոստիայի ականջին: Նրանք երկուսով միաժամանակ նայեցին նորէն անծանօթին, որ դեռ նայում էր նրանց, նայեցին իրար ու ծիծաղեցին: Նրանք և ծիծաղում էին, և ակնարկներով յուզում անծանօթ ճանապարհորդին, որովհետև իրանց ակնարկները դէպ նըրան էին ուղղում:

Նկատեց այդ անծանօթ ճանապարհորդը, նայեց նրանց շեշտակի հայեացքով և ապա ձեռքը գրպանը տանելով՝ հանեց մի գլանակ, վառեց ու սկսեց ագահ ագահ ծիւել. Քիչ յետոյ միայն, որպէս վրէժ, հեգնանքի ակնարկներով անծանօթը դիմեց նրանց:

—Ներեցէք պարզնայք, իմ ծխելով ես ձեր տհաճութիւնը չեմ շարժում:

— Խնդրեմ, խնդրեմ,—պատասխանեց օրիորդը, հասկանալով նրա միտքը. Օրինակը վարակիչ է լինում: Կոստիան էլ հանեց, որ ծխի, բայց գլանակը մնաց ձեռին:

Որքան և նա դէս

ու դէս, այս ու այն գրպանը նայեց լուցկի հանելու, այնուամենայնիւ չգտաւ: Նա լուցկին կորցրել էր, ուստի ստիպւած եղաւ դիմելու անձանօթին:

— Թոյլ կտաք վառել:

— Ամենայն ուրախութեամբ, միայն դա ձեզ յարմար չէ դալիս:

Կոստիան գլանակը վառելուց յետոյ դիմեց անծանօթին:

— Ինչո՞ւ էք կարծում, թէ դա ինձ յարմար չէ դալիս:

— Շատ պարզ է, նախ, ինչպէս նկատում եմ այս ձեր տեղը չէ. և երկրորդ ձեր և օրիորդի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը ցոյց էր տալիս, որ գուք չէք սիրում կեղտոտ ու ապականւած օդ և նեղ դըռութիւն, իսկ ծխելով մի աւելորդ անգամ կուլ էք տալու առանց այն էլ ապականւած օդի խտացած հոսանք, որը վնասելու է ձեր քնքոյշ կեանքը:

— Այս, պարոն, շատ ճիշտ է ձեր նկատողութիւնը, միայն անհրաժեշտութիւն դարձած սովորութիւնը միանգամհց վերցնել չէ կարելի. բացի դրանից առանց իմ ծխելու էլ ձեր ծխելն էլ բաւական է օդը կեղտոտելու, գուք այդ բանը մոռանում էք: Ինչ վերաբերում է ապականւած օդին, որ վնասակար է, երկի չեք ժխտի. ուրեմն, քան եթէ նրա մէջ ապրելով կեանք փչացնել, կարելի էր դրանից շուտով

խուսափել, մահաւանդ՝ երբ դրան հասնելու հընարաւորութիւնը կայ:

—Դուք սիսալ չհասկանաք ինձ, յարգելի պարոն, ես չեմ ժխտում բարեկեցիկ ապրուստի պայմաններ ստեղծելու սկզբունքը, ընդհակառակը, ջերմ կողմանակիցներից լինելով՝ նկատում եմ, որ դուք այդպիսի պայմաններ ստեղծելու կամ ձեռք բերելու համար նախապէս պիտի հոգայիք: Ինչու էք դուք ինձ օրինակ վերցնում, մենք բոլորս հասարակ մահկանացուներ ենք և սովոր այսպիսի կեանք տանելուն, որի տանելու դէմ, գուցէ, մենք էլ ենք զգւում, սակայն ճար չունենք: Հարցը դրանում չէ, հարցը հայեացքների մէջ է: Օրիորդի հետ ունեցած ձեր խօսակցութեան ժամանակ մի միտք արտայայտեցիք, որ ինձ վրայ շատ վատ տապաւորութիւն թողեց: Ի՞նչպէս կարելի է զգւել մեզ նման մարդկանցից, որոնք այս դաժան կեանքում աննպաստ հանգամանքների շնորհիւ միայն շատ տանջւելն ու աշխատելը, սակայն շատ ու շատ քչով բաւականանալն են ստացել բաժին: Նրանք շարունակաբար ոտնահարուում են մեզանից, փոխարէն մեզնում խղճահարութեան զգացում զարթեցնելու: Միթէ դուք համաձայն չէք, որ նըրանց կեղտոտ ապրելու, վատ երևոյթներ յառաջ բերելու և տգեղ խօսակցութիւններ ու շարժումներ թոյլ տալու պատճառները մտաւոր խաւար և տնտեսապէս վատ դրութիւնից է յառաջանում:

Ինչու էք զգւում դրանցից, երբ իմ և ձեր նըման բարեկեցիկ դրութիւն ունեցողներն են նըրանց այդ օրին հասցըել, ծծելով ու քամելով նրանց թէ տնտեսականը և թէ ամբողջ կենսունակութիւնը: Այդ երևոյթների հետևանքն է դարձել նրանց կեղտի ու մուրի մէջ տապակւել, սոված ու մերկ, տգէտ ու զգւանք շալակած թափառելու մի կտոր սև չոր հացի համար: Իւրաքանչիւր քայլափոխում գուք զգւանքի դէմ էք կանգնելու, նրա հիմքն ու յառաջացնող պատճառներն արմատախիլ արէք, եթէ չէք ուզում նրան հանդիպել: Այդ հարցում ձեր հայեացքն էր տարօրինակ, էլի օրիորդի հայեացքն արժանի է յարգանքի:

—Դուք շատ առաջ գնացիք, պարոն....

—Թոյլ տուր ինձ, կոստիա, մէջ մտաւ Մարգարիտը և աշխատեց փոխել խօսակցութիւնը: Նա զգաց, որ խօսակցութիւնը կարող էր սուր կերպարանք ընդունել և դրա համար էլ ուղեց վերջ տալ նրան: Ամբողջ վիճարանութեան ընթացքում, Մարգարիտը հետեւում էր խօսակցութեան իւրաքանչիւր բառին ու նախադասութեանը: Նա անծանօթի մէջ զտնում էր իր հայեացքների տէր մարդու: Այժմ միայն նըրան հետաքրքրում էր, թէ նա ուր և ինչի է զնում. սրա համար էլ հարցըեց:

—Ներեցէք պարոն, դուք էլ ուսանող էք:

—Ի՞նչպէս էք կարծում:

— Հստ երևոյթին այդպէս պիտի լինի:
 — Ազատ էք ձեր կարծիքների մէջ:
 — Գնում էք շարունակելու:
 — Դժբախտաբար տանջւելու եմ գնում:
 — Այդ ի՞նչ է հաշնակում:
 — Շատ հասկանալի է, տանջանքներ կը ելու
 համար եմ գնում:
 — Բայց միթէ շարունակելը տանջանք է:
 — Նայած, թէ ի՞նչը շարունակելը:
 — Դուք ուսման չէք գնում:
 — Ոչ, ես ուսանող չեմ:
 — Հապա հւը էք գնում:
 — Ո՞ւր գնալս ինքս էլ չպիտեմ, միայն այն-
 քան պիտի գնամ, որ հայրենիքի սահմաններից
 հեռանամ, տարագիր դառնալու դժբախտութիւնն
 է վիճակւած ինձ:

Այստեղ նրանք լուեցին: Միասին երկար ճա-
 նապահնորդելը, միմեանց հետ խօսելու, վիճե-
 լու և մտքեր փոխանակելու շարժառիթներ էր
 ստեղծել: Նրանք այնունետև էլ երկար խօսակ-
 ցութիւններով բռնւեցան, զանազան հարցերի
 շուրջը վիճաքանեցին: Դիպւածական այս հանդի-
 պումը նրանց ծանօթացրեց միմեանց հետ, այն-
 չափ մօտեցրեց, որ Մարգարիտը յաճախ նրան
 հրաւիրում էր նստելու իր նստարանի վրայ—
 իրեն մօտ:

Կոստիան և Մարգարիտը հարուստ ընտա-
 նիքի զաւակներ էին, սակայն տարբեր պայման-

ներում սնւած ու մեծացած:

Կոստիան երբէք կարօտութիւն չէր տեսել,
 միշտ լիառատ կեանքի բարիքներ վայելելով էր
 օր անցկացրել. այս հանգամանքը նրա մէջ դար-
 բնել էր եսամոլութիւնը: Խօսակցութիւնների
 ժամանակ հակառակ իր ես-ի դատելը ոչ թէ
 բղասում էին նրա անկեղծ համոզմունքներից, այլ
 որ այդպիսով նա աշխատում էր ամեն շրջանում
 տիրող հոսանքի և շրջապատի մէջ յարմարւելով՝
 աննպաստ կարծիք չը վաստակել իր մասին, որը
 կարող էր իր վարկը գցել: Իր գեղեցիկ և կոկ
 հագնւած արտաքինի, համեստ ու մեղմաբարոյ
 բնաւորութեան մէջ պահում էր հանգամանքնե-
 րին խստօրէն յարմարւելու ճարպիկ խորաման-
 կութիւնը: Այդ յատկութիւնը նա դրսի աշխար-
 հից չէր վաստակել, այլ ժառանգական բնատուր
 ձիրք էր: Տարբերութիւնը կայանում էր նրա-
 նում, որ սրա նախնիքները դաժան խստաբր-
 տութեան տէր մարդիկ էին, առանց իննայելու
 ու խղճալու իւրաքանչիւր ձեռն ընկածից օգտ-
 ել էին ամեն կերպ ու այդպիսով կազմել արն-
 տեսական բարեկեցիկ ու հարուստ դրութիւն.
 իսկ սա գեռ կեանք չդուրս եկած, չէր հասկա-
 ցել փող զիզելու ախորժակը և շոայլաբար վատ-
 նում էր, սրան, նրան բաժանում, մինչև իսկ
 կարօտեալներին օգնութեան հասնում: Վերջին
 հանգամանքն, սաենք, ուրիշ պատճառ էլ ունէր:
 — Նա խղճի թելաղրումներով սնւած ու առաջ-

Նորդւող գեղեցիկ Մարգարիտի սիրտը միանդամբց գրաւելու համար, ըստ նրա ցանկութեան, անում էր ամեն բան, համոզւում էր նրա հայեցքներին ու դատողութիւններին, կատարում էր նրա բոլոր պահանջները և ամեն կերպ աշխատում էր յարմարւել այնպէս, որ ոչ մի առիթ չըներկայացնէ նրա վատ կարծիքը վաստակելու:

Մարգարիտը նոյնպէս կարօտութիւն չըքաշած ընտանիքի զաւակ էր: Մեծանալով իր տատի անմիջական ինսամակալութեան տակ, բնականից հետը բերած հաստատակամութեան վրայ աւելացրել էր նրանից սովորած գթասիրտ դառնալու և համեստ կեանք վարելու յատկութիւնները: Շարունակ բարեկիրթ շրջաններում գտնւելով՝ նա իւրացրել էր բարեկիրթ ու ազնիւ լինելու ձգտումը: Այդ էր պատճառը, որ նա ամբողջ ծանօթ առաջադէմ ուսանողութեան սէրն ու յարդանքն էր վայելում: Թէ ուսանողութեան շրջանում և թէ ընդհանրապէս՝ ոչ մի լաւ ձեռնարկութիւն և ընկերակցութեան զլուխ չէր գալիս, եթէ նա հնարաւորութիւն ու միջոց ունէր գրան համնելու: Մարգարիտը ամեն մի ծանօթի և ընկերի հետ նոյն մօտիկ ու պարզ յարաբերութիւնն էր պահպանում, այնպէս որ, իւրաքանչիւր կողմանի մարդ նրան տարբեր տարբեր մարդկանց հետ առանձնակի դրութեան մէջ պա-

տահելիս, պիտի կարծէր, թէ սիրահարւած զոյգեր են: Բայց Մարգարիտը միևնոյնն էր ամենքի համար և ամեն տեղ, միայն ուրիշները միենոյնը չէին դէպ' Մարգարիտը:

Իւրաքանչիւր մարդու մէջ արմատացած յատկութիւնը նման երևոյթներով է երևան գալիս, ահա թէ ինչու Մարգարտի պարզ և անկեղծ յարաբերութիւնը այս կամ այն բացատրութիւնն էր ստանում տարբեր մարդկանց մօտ: Կոստիան առաջններից մէկն էր, որ իր քողարկւած ու անհամապատասխան յատկութիւններով աշխատում էր տիրել Մարգարիտի սիրտը և ընդ միշտ տէր դառնալ նրան: Նա կարծում էր, թէ Մարգարիտն իրան սիրում է, սրա համար ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում իր նպատակին հասնելու:

Սնծանօթ ճանապարհորդի գննող հայեցքից այդ բանը չէր սպրդել: Նրա հոգեբանական ճիշտ ըմբռնողութեան ընդունակութիւնը չէր խարում նրան, սակայն նոր ծանօթացած լինելով՝ կարծում էր, թէ կարող է սիալ ենթադրութիւնների մէջ ընկած լինել: Սնծանօթը մէկ ուզում էր հեռաւոր ակնարկներով հասկացնել տալ մէկ թէ միւսին, որ իրանք համապատասխան զոյգեր չեն կարող լինել, մէկ վախենում էր, թէ այդ քայլը համարձակ լինելով՝ կարող էր վատ հետեանքների պատճառ դառնալ: Նա յետ կանգնեց այդ մտքից, սակայն չէր դադարում նոյն ուզու-

թեամբ մտածելուց: Նա կարծում էր, թէ նրանք վերջի վերջոյ կապւելու են միմեանց հետ, որպէս կեանքի մշտակայ և անբաժան ընկերներ. սակայն այդ կապը երկար չէ տեղիու, նրանք բաժանւելու են իրարից, որպէս անհամապատասխան զոյգեր, լքւած, դառնացած հոգեկան այլանդակ ապրումներով ու դժբախտ: Նա ափսում էր Մարգարիտն: Նա կարծում էր, եթէ Մարգարտի կեանքը կապւէր իրեն համապատասխան մարդու հետ, այն ժամանակ, ոչ թէ միայն ինքը երջանիկ ու ուրախ էր լինելու, այլ և նրա զմթամիրտ բարութիւնից թշւառների որոշ թիւ սփոփանք էր ստանալու: Նա կլինէր ազատ, ինքնուրոյն, ոչ կաշկանդւած իր ամուսնու ճանկերում ու հասարակական համեստ գործունէութեամբ շահ էր բերելու մարդկութեամը:

Կոստիան, Մարգարիտն ու Վարդգէսը, այդպէս էր անծանօթի անունը, ամբողջ օր ճանապարհորդում էին միասին և զեռ պիտի շարունակէին: Վարդգէսը խօսակից էր գտել: Նա ազատւել էր այն բոլոր խոժոռ ու տանջող մտքերի խորանդունդ ծովից, որոնք յառաջացել էին նրան շրջապատող աննպաստ հանգամանքներից, նրա հոգեկան ալեկոծւող դրութիւնից: Չնայած այն հանգամանքին, որ նա տառապանքը շալակած ակամայից հեռանում էր օտար տեղ, անծանօթ երկնքի տակ, ով գիտէ, ինչպիսի դառնութիւններ տեսնելու — կը բելու, այնուամենայնիւ ուրախ

էր խօսակից ծանօթներ գտնելով: Նա ազատւում էր իրեն տանջող ծանր մտքերին կուլ գրնալուց. այժմ խօսակից ունէր, որոնց հետ ասում, խօսում ու վիճում էր և այդպէս ժամանակ անցկացնում: Ամբողջ ձանապարհի ընթացքում Վարդգէսը, կոստիան և Մարգարիտն անդադրում խօսում էին զանազան հարցերի մասին: Մէկ հասարակական որևէ խնդիր էր դառնում խօսակցութեան նիւթը, մէկ գիպւածով հանդիպած որևէ երևոյթ, անձնական ցանկութիւն, հոգեկան գրութիւն և այսպէս անվերջ: Պայմանների այսպէս ստեղծւելն ու դասաւորւելը կարծ ժամանակւայ ընթացքում մօտիկ ծանօթներ էին դարձրել Վարդգէսին և Մարգարիտն: Նրանք շատ լաւ հասկացել էին իրար հոգին, ծանօթացել միմեանց հայեացքներին ու այդ պատճառով էլ չէին կշտանում իրար նորանոր հարցեր առաջարկելուց և նրանց շուրջը մտքեր փոխանակելուց: Առաջարկւած հարցերի շուրջը տեղի ունեցող խօսակցութիւններին կոստիան էլ էր մասնակցում, սակայն շատ մակերևոյթօրէն, այն էլ երբ հարկաւոր էր լինում Մարգարտի բացատրութիւնները պնդել: Ըսդհանրապէս, նա յաճախ խուսափում էր վիճաբանութիւնների մէջ մըտնելուց, կամ ընդունակ չլինելով տրւած հարցերին մօտաւոր բացատրութիւններ գտնելու և կամ որտին մօտիկ չզգալով այն. այդպիսի դէպքերում զբաղւելու մի բան գտնում էր նա:

— Օրիորդ Մարգարիտ, — դիմեց նրան Վարդգէսը, դուք տեսնում էք այս մարդկանց, ակնարկեց գիւղացիների վրայ, որ մեզ պէս մարդկային էակներ են համանման ցանկութիւններով, մտածումներով և զգացումներով. աշխատելով՝ թերես աւելի տոկուն, ժիր և անխոնջ, քան մենք և սակայն ապրում են այսպէս խեղճ, մինչև իսկ գարշահոտութեան զգւանք են նրանք մեզ համար: Ի՞նչպէս էք նկատում, ի՞նչով կրաբելաւուի նրանց կեանքը:

— Հարցը ցաւոտ է, — պատասխանեց Մարգարիտը: Նրանք այդպէս էլ պիտի քաշ գան մինչև կմեռնեն ու կպրծնեն մեր նման գաղանարի ձեռքից, եթէ հասարակական գիտակցական վերաբերմունքը օգնութիւն չհասնի:

— Ի՞նչպէս:

— Այնպէս:

— Չեմ հասկանում:

— Ի՞նչ կայ չհասկանալու. որևէ է կարիք ունեցող մարդ ստիպւած է լինում ձեռք մեկնելու կարողութիւն ունեցողներին: Կեանքի դրաման այստեղ է կատարում: Հարուստը ձեռնում է բարեսիրտ, իր աշք շացնող պատիւներով ցոյց տալիս, որ ինքը օգնութիւն ինդրողի բարեկամն է ու, որպէս օգնութիւն, նրան պարտ կամ փոխառութիւն է տալիս իր ցանկացած պայմաններով: Այնուհետեւ գերերը փոխում են՝ պարտատէրը, հարուստը, վաշխառուն, վաճառա-

կանը, որն ուզում էք, վերցրէք, դառնում է խստասիրտ ու պահանջկոտ, սպառնացող ու գոռոզ, որպէսզի իր գրպանը լցնի ու լցնի: Եւ պարտապանը կապւած ու կախւած է մնում պարտք, բարիք, փոխառութիւն և կամ օգնութիւն տւողից: Իր անատեսութիւնը բարեկաւելու փոխարէն՝ բարիք ստացողը քայլայում է այն՝ տալով տալով ու ձեռքերից չաղատւելով:

— Օրիորդ Մարգարիտ, — ընդհատեց նրան Վարդգէսը, միջանկեալ նկատեմ, ձեր ճիշտողութիւնները միանգամայն զարմանք են պատճառում ինձ, միայն վաճառականներին ընդհանուրպէս վերագրել այդ արատը՝ ինձ թւում է, չափազանցութիւն է: Վաճառականների շարքերում քիչ քաղաքակրթւած մարդիկ չկան, որոնք մեր հասարակական կեանքում մեծ դեր են խաղում, ուստի չպէտք է թացն ու չորը միասին խառնել ու այնպէս վառել: Ինձ թւում է, թէ վաճառականների շարքերում էլի կարելի էր մեծ քանակութեամբ պէտքական, ազնիւ, անկեղծ ու խղճով մարդիկ գտնել. և եթէ այդպէս չլինէր, ինչին պիտի վերագրէինք այն բոլոր զոհողութիւններն ու նւիրաբերութիւնները, որոնցով այս կամ այն հասարակական բարենպատակ իդէա և աղէտ իր յաջող ելքին է յանգում:

— Յարգելի Վարդգէս, — երեխ դուք երբէք վաճառականների շրջանում չէք եղել, որ այս-

պէս քաղցր երազներ ունէք նրանց ազնը-
ւութեան, անկեղծութեան, խղճի և բարիքի
մասին։ Առակն ասում է. — մէկն էն մէկից՝ եր-
կուսն էլ նոյն տնից—։ Թերես գիւղացի տգէտ
վաշխառուն ու տղրուկն աւելի բարձր կանգնած
լինի թւած յատկութիւնների մեղմութեամբ,
քան քաղաքակրթւած վաճառականը։ Վաճառա-
կանների մէջ ի՞նչ ազնւութիւն, խիղճ և բարու-
թիւն էք գտնում, թէկուզ՝ շատ քաղաքակրթ-
ւածներից աւելի կրթւած լինեն. նրանք իրենց
վարմունքով ընդհանրապէս վաճառականի դերից
դէնը չեն անցնում։ Նրանք քաղաքակրթւած ու
ճարպիկ են, այո, և դուք միևնոյն մարդուն
զանազան ֆրոնտների ու ճանապարհների վրայ
կդտնէք։ Մէկ տեղ՝ նա իր ազնւութեամբ ու
մաքրութեամբ սուրբ է—հրեշտակ, իսկ խղճով՝
Աստւած. մէկ տեղ նա հասարակական բարեգործ
է—քաղաքարական գործիչ. մէկ տեղ՝ ստի, կեղ-
ծիքի ու փարիսեցիութեան սև կուռք. մի ուրիշ
տեղ՝ ճարպիկ խաբեքայութեան սատանայապետ,
իսկ այս և այն յատկութիւնների խառնուրդը մի
ճիւղային հրէշի էութիւն, որի ճիրաններում
խեղճերը, միամիտները, խղճովները և բոլոր կա-
րիքաւորներն են թրապտում, որպէս զոհեր։ Այդ-
պիսիների բարիքը, չնչին բացառութեամբ, ա-
նուն վաստակելու, կոյլ աշխարհում մարդկանց
աշքերը թող փչելու ու ճեռներն ընկած որսերի
կաշին քերթելու, կեղեքելու ու կողոպտելու շա-

հից է բղխում։ Հակառակն եթէ ասելու լինենք,
ի՞նչ վխաս մի մարդու համար. սրանից նրանից
կողոպտելով մի քանի աւելորդ կոպէկներ շպըր-
տել որկ է հասարակական սնդուկ, աչք ու բե-
րան փակելու և լաւ մարդ երեալու համար։
Միամիտ պիտի լինել խիղճ, աղնւութիւն, ան-
կեղծութիւն և մինչև իսկ բարոյական պարտք ո-
րոնել այնտեղ, որտեղ նրանք չկան. մօտիկ և
անթիւ փորձերը ինձ շատ բան են ասել, բա-
ցառութիւնների մասին չեմ խօսում։

— Հասկանում եմ ձեզ. կեանքում ամեն ինչ
տարւում է առևտրի և վաճառականութեան ո-
գով, իսկ դա մեծ կամ փոքր չափով իր անար-
դար ու անխիղճ գերն ունի, հետևապէս գործի
ձեռնարկողներն էլ գործի էութեան նման՝ սիրտ
ու հոգի։ Ինձ համար գեռ հասկանալի չդարձաւ,
թէ դրանց շարքերում չի կարելի գտնել այնպի-
սի շատերին, որոնք այս կամ այն հասարակա-
կան հիմնարկութեան շուրջը համախմբւելով, նը-
րանց անկեղծ գործիչների հետ միասին չկարո-
ղանային աւելի մեծ չափով այս կամ մի ուրիշ
հասարակական վատ երևոյթի դէմը կուել և
թոյլ տալ, որ աղքատութիւնը, տգիտութիւնը
և անձարութիւնը այն աւերժունքները գործեն,
ինչպիսին փչում է այս խեղճ գիւղացիներից։
Երեկ ինձ պիտի առարկէք, թէ անկեղծ հասա-
րակական գործիչներ էլ քիչ ունինք. նրանք էլ
մեծ մասամբ նախ իրանց շահերն ի նկատի ու-

նին. թէկուզ այդպէս՝ միայն քիչ լայն չափերով
և հետզհետէ սրբւէր տառապողների արցունք-
ներն ու մտքի խաւարը։ Ո՞վ գիտէ, մի կտոր
չոր հացի համար չէ, որ սրանք էլ շալակած
դատարկ յոյսերը, թողած ամեն ինչ, օտար տեղ
բաղդ են որոնում։

Մարգարտի և Վարդգէսի վիճաբանութիւն-
ներն երկար տեսցին։ Հայեացքների վերաբեր-
մամբ երկուսն էլ հեռու չէին իրարից, միայն
Մարգարիան աւելի հոռետես էր այդ կողմից,
քան Վարդգէսը։ Եւ իրօք, իր կրթւած հօրեղ-
բայր Սամսոնի հարստութիւն դիզելու դիտում-
ները մեծ փաստեր էին տւել Մարգարտի ձեռքը։
Չնայած այն հանգամանքին, որ նա աղքատների,
տուժողների հետ անմիջական յարաբերութիւն
չէր ունեցել երբէք, գիւղացիների կեանքի հետ
համարեա թէ ծանօթ չէր, բայց ենթադրում էր,
թէ բոլոր տեղերումն էլ դրանց կեղեքող և հա-
րստահարողները մեծ կամ փոքր չափերով իր
հօրեղբօր հոգին պիտի ունենային, որոնց, որ-
պէս մարդկանց, երբէք հաւատալու չէր։

Նրանք երկուսն էլ յոգնել էին վիճելուց,
այժմ կարիք էին զգում հանգստանալու. և նը-
րանք տեղաւորւեցին իրար կողքի—Մարգարտի
նստարանի վրայ։

Մարգարտի ու Վարդգէսի այդչափ մօտի-
կանալլ շարժել էր Կոստիայի նախանձը։ Նա շատ
անհանգիստ էր երկում, դժկամակութեամբ և

ահաճութեամբ էր պատասխանում Վարդգէսի
առաջարկած հարցերին։ Աստիճանաբար նա ա-
ւելի և աւելի յուզւում էր. այդ երկում էր նը-
րա ատամների կրծտոցից, փայլատակող աչքերի
անսովոր թարթումներից և շրթունքների անդա-
դրում շարժումներից։

Երբ նա արտասովոր զայրոյթ էր զգում,
սկզբում նրա դէմքի նուրբ կաշին կապտում էր
և ապա մինչև ականջների ծայրերը արնակալած
կարմրութիւն կտրում և յետոյ տեղի տալով՝
դեղնութիւն էր գալիս նրա վրայ։ Մարգարիան
այդ նկատել էր, ինչպիսին շատ անգամ էր հան-
դիպել իրան։ Նա զգացել ու հասկացել էր
Կոստիայի մէջ տեղի ունեցած յուզումները։
Մարգարիաը նրա այդ յուզումնալից դրութիւնը
վերագրում էր այն բանին, որ Վարդգէսը վի-
ճաբանութիւնների ժամանակ կծու ակնարկներ
էր ուղղում դէպ՝ Կոստիան, որպէս փոխ հարւած-
ներ Կոստիայի արած ակնարկներին։ Նա գտնում
էր, որ այդ բանի համար Կոստիան իրաւունք
չունէր յուզւելու, քանի որ մեղաւորն ինքն էր
և դրա համար էլ ոչ մի ուշադրութիւն չէր դարձ-
նում նրա վրայ։

Կոստիայի ալեկոծւող մտքերը քաօս էին
ստեղծել նրա զլիում։ Նա մէկ մտածում էր,
թէ Մարգարիան իրեն սիրում է, մէկ էլ չէր
հասկանում, թէ ի՞նչով բացատրել նրա այնպէս
սերտօրէն մօտիկութիւնը մի օրւայ ծանօթ

Վարդգէսի հետ, Կոստիան մտածում էր, թէ ամեն
անգամ, երբ այդպիսի հոգեկան դրութեան մէջ
էր ընկել, Մարգարիտի մի քաղցր խօսքը, բարի
նայածքն ու ժպտալից յանդիմանութիւնն ան-
գամ, որպէս կրակի վրայ ածւող ջուրը, հան-
գստացրել էին նրան. այսօր այդ տեղի չէր ու-
նենում, ուրեմն Մարգարիտն իրանից հեռանում
էր: Դա յուզում էր ու կրծում նրա հոգին, որ-
պէս ջաղացի անկերակուր երկու երկանները:

Այսպէս է լինում սեպհական եսի մտորում-
ներով տարւած անձնաւորութեան մէջ, շուտով
գլուխ է բարձրացնում կասկածը և չար նախան-
ձը, որ այնպէս շտապով ատելութեան է փոխ-
ուում ու իր աւերումները կատարում:

Կոստիայի հոգեկան յուզումները իրենց վեր-
ջակէտին յանգան, երբ Մարգարիտը Վարդգէսի
հետ խօսակցութիւնը վերջացնելով՝ զիմեց Կոս-
տիային, թէ սոված է, ուզում է ճաշել:

Նրանք փոեցին սեղանը Մարգարտի նստա-
րանի վրայ. բացեցին զամբիւզը և նրա միջից
հանելով՝ սեղանի վրայ դարսեցին տապակած միս,
սագ, կարագ, պանիր, ձու և ձուկն ու զանա-
գան քաղցրաւէնիք: Մարգարտի թախանձանքնե-
րին զիջելով՝ Վարդգէսն էլ մասնակցեց նրանց
հարուստ ճաշին: Կուշտ ճաշեցին, և ամեն մէկը
պառկեց իր տեղում հանգստանալու:

II

Իրիկնաղէմ էր: Գնացքն իր ճանապարհոր-
դութիւնն էր կատարում: Մարդիկ կուչ ու ձիգ
անելով լուսամուտների երկտակ փեղկերի միջից՝
աշխատում էին դիտել ձմերային արեակալած
գեղեցկութիւնը: Կէս սառցապատ և կէս քրտ-
նաթոր ապակիները չէին թոյլ տալիս նայելու
ձմերային արեւ, որ ասես՝ կարմրակալած, ա-
մօթիած հարս, մեղմօրէն ու անհամարձակ իր
սառը ճառագայթներն էր տարածել ամբողջա-
պէս սպիտակ հագած սար ու գաշտի կրծքին:
Փայլվլում ու առկայծում էին ճեան փրխ-
րուն քուշաները, որպէս փոքրիկ աղամանգեայ
բիւրեղներ: Տնքալով գնացքն առաջ էր վաղում,
իսկ նրա տասնեակ կառքերում կամով բանտար-
կւած հարիւրաւոր ճանապարհորդները հնարա-
ւորութիւն չունէին ազատ նայելու բնութեան
գեղեցկութիւնը: Լուսամուտները փակ՝ բացելու
երաւունք չունէին, հակող վերակացուներն ար-
գելում էին խստիւ: Զէ՞ որ անլեզու գաղան—
ձմերային սառնամանիքը մարդ է սպանում, էլ
ի՞նչպէս կարելի էր յատուկ այդ բանի համար

տաքացրած դուռն ու լուսամուտները բաց անել: Կամով բանտարկւած ճանապարհորդների ազատ շարժումները կայանում էին նրանում, որ երբ գնացքը կայարաններում կանգ էր առնում, ազատ ու մաքուր օդ սիրողները տաք հագնւած՝ դուրս էին վագում, մի երկու գլուխ անց ու դարձ անում ու նորէն ներս վագում: Նրանք, որոնք ներսումն էին մնում, գնացքի թէ կանգնելու, թէ գնացած ժամանակ մնում էին տեղները մեխւած կամ պառկած, որպէս հիւանդ: Մարդիկ, որպէսզի ցոյց տան, թէ անշարժութիւնից անչնչացած չեն դեռ, երբեմն երբեմն կանգնում էին, մէկ կուպէից միւսն անցնում, կամ այս ու այն խմբւած զրուցաւորներին մօտենում, լսում, խօսում և քիչ յետոյ՝ նորէն գալիս տեղները մեխւում:

Երկու գիւղացիները, որպէս դիակներ, կոստիայի և Մարգարտի վերկի յարկում անշարժ ձգւած էին մնացել: Հասարակ դասից լինելով՝ նրանք իրաւունք չունէին համարձակ շարժում գործելու—շարունակ տեղներից իջնելն ու այստեղ բարձրանալը, ասես, արգելւած էր նրանց. չէ որ այդ վարմունքը դուր չէր գալու ներքեի նստածներին: Նման դէպքերում նրանք շատ էին յանդիմանութիւն ու հայնոյանք կերել: Նրանք շատ լաւ հասկանում էին, որ չարժէ աղաների բարկութիւնը շարժել, զրանից իրանք օգուտ չեն վաստակի, այլ՝ չգիտեմ, ինչպիսի չարիք են ստա-

նալու: Եւ նրանք անշարժ պառկած էին իրենց տեղերում: Աշխարհում սրբագործւած օրէնք է դարձել, թէ աղքատն ու անձարը պարտական է հարուստին կամ պարկեշտ հագնւածին աղայ ընդունել: Նա պէտք է աղայի խոնարհ ծառան դառնայ, ոչ մի շարժումով աղայի անբաւականութեանը չարժանանայ: Այսպիսի բնութեամբ կոփւած երկու գիւղացիները, կարիքի ստիպողական պահանջի տակ՝ զգուշութեամբ ու վախով իրենց տեղերից ցած սողացին: Երկոյթը դժկամութեան կնճիռներ յառաջացրեց կոստիայի դէմքին: Կառքում տաք էր: Գիւղացիները վերարկուանման խալաթները, կամ աւելի շուտ փոստերը, հանել էին վրաներից: Նրանց կոշտացած և արկից սեացած մոխրագոյն դէմքերը կնճուակալած էին: Անտանելի հոգսերի չարքաշ ու դառն տանջանքների կնիքն էր երեւում նրանց ճակատներին: Նրանցից երիտասարդի անժամանակ կորացած մէջքը վկայում էր, թէ նա սև աշխատանքի անտանելի ծանրութեան տակ է ծուել: Արխալուխի հազար երանգ կարկատանների կախ ընկած ծլանքները նման էին սպանւած բայդուշի (բու) գետնատարափ թևերին, որոնք նրա առաջից ու յետկից ոտներին ծփծփալով՝ յիշեցնում էին նրա կեանքի զըրկանքների դաժան մեղկութիւնը: Նրա դէմքի, ձեռների և շորերի կեղտից կաշի դարձած պալարները պատմում էին, թէ նա կեանքում չէ

լւացւել, սապոն չէ կպել նրա մարմնին ու շորերին: Հասակաւոր գիւղացին, որ տարիքով հազիւ 40—45 լինէր, արդէն սպիտակած ծերունի էր: Նրա դէմքի արտայայտութիւնը կրած անվերջ զրկանքների և թշւառութեան պատմութիւնն էր անում: Նրա հագուստը շատ աւելի աննախանձ նկարագիր ունէր, քան երիտասարդինը: Արխալուխի թիկունքի պատառոտւած բացւածքից կեղտի մէջ կորած սև կոշտացած կաշին էր երևում, որի վրայ ուղղահայեաց սպին էր պառկել. թերևս, նա աղաների դագանակների անողոք հարւածների հետքն էր: Նա համարեա կիսամերկ էր: Գուլպաներ չունէր հագած, տրեխների ծակոտւած ծայրերից, որպէս սոված ու վախկոտ սողունները իրանց որջից, բութ մատներն իրենց գլուխները հանած՝ այնպէս քսւում էին գետնին:

Նրանք մենակ չէին. դրանց երրորդ ընկերը, որպէս մի կեղտոտ, պատառոտւած, անսպէտք փալաս՝ շպրտւած ու տեղաւորւած էր Կոստիայի նստարանի տակ: Նա ամբողջ օրը, անհաց ու անջուր, որպէս անշունչ առարկայ, կըծկւած քնած էր: Նա ճանապարհորդելու փող էլ չէր գտել, միայն երկաթուղու նոյն կառքի ծառայողին 40 կոպէկ վճարելով՝ ինդրել էր տեղ հասցնել իրան, թէկուզ հէնց այդպէս: Դրանք էլ էին ճանապարհորդ և մեր ճանապարհորդների հետ միասին գնում էին: Նրանց մարմնից և շո-

րերից գարշահոտութիւն էր փչում. կեանքի ապականութիւնը էին սրանք: Ժանտախտի ու խօլերայի միացած էութեան մարմնացումն, ասես, աւելի պարկեշտ կերպարանք ունէր, քան սրանք: Նրանք կեանքի թափթփուկ շարժուն աղտեղութիւնն էին և զգւելի:

—Տեսնո՞ւմ էք, Մարգարիտ, սրանք էլ մարդիկ են:

—Դժբախտաբար, այո. շատ կը ցանկանայի մի փոքր սրանց հետ խօսել:

—Դա մեծ պատիւ կլինէր նրանց,—մէջ մտաւ կոստիան:

—Կարծեմ, պէտք է որ մեզ նման մարդկանց հետ խօսելն ու ուշադրութեան առնելը ոչ արհամարհանքի ենթարկւի և ոչ էլ պատիւ համարւի. —պատասխանեց Վարդգէսը:

—Այո, այն գէպքում, երբ նրանց նիւթական շահ էք բերելու և...

—Շահերը լինում են և նիւթական, և բարոյական. —ընդհատեց Մարգարիտը: Մինչեւ մարդկանց դրութիւնը չուսումնասիրէք, նրանց դարմանելու առաջարկւած միջոցներն էլ իզուր կանցնեն և յետոյ ոչ մի բան բոպէապէս չի իրականանում կեանքում: Միթէ գործ կատարելուց առաջ, գործի համար պէտք չեն բազմակողմանի ուսումնասիրութիւններ, այլապէս մենք ոչ մի բանի մասին նախապէս ծանօթութիւն չպիտի ունենայինք, և մենք ինքներս

կանշարժացնէինք կեանքը. սխալ դատողութիւն է:
—Թէկուզ այդպէս լինի. նրանցից գարշա-
հոտութիւն է փչում, կողք կողքի նստած՝ տա-
նել չի կարելի: Բացի դրանից, դուք շարունակ
ուրիշների մասին էք խօսում, մոռանալով՝ որ
մենք էլ մարդիկ ենք, որ որևէ դժբախտի հետ
խօսելով՝ միայն կարող ենք մի ուրիշ դժբախտու-
թիւն յառաջացնել—հիւանդացնել մեզ զգւան-
քից՝ քիչ նպաստաւոր ծառայութիւն կլինէր.
Դրան ես երբէք համաձայն չեմ:

—Թշւառին օգնութիւն հասնողը զգւանքից
չի վախենում և ոչ զգւում. նա զոհողութիւն ա-
նելու ճանապարհի վրայ է կանգնում: Գիւղա-
ցիներին արժատական օգնութիւն հասցնելը,
ներկայ դէպքում, նրանց մասին ստոյգ տե-
ղեկութիւն և ծանօթութիւն հաւաքելն է, ո-
րովհետև յարմար դիպւածն է հնարաւորութիւն
տալիս դրան համնելու: Օգտուելն ու այդ առթիւ-
ձեռնարկութիւն սկսելը՝ յետագայի ինսդիր է:
Պէտք է լաւ ըմբռնել, որ մեր կեանքի հետ սեր-
տորէն առնչութիւն ունեցող բազմաթիւ կենսա-
կան ինդիրներ մանրազննին ուսումնասիրութիւն
են պահանջում ամեն մէկիցս, սակայն այնքան
էլ հեշտութեամբ յարմարութիւն ու հնարաւո-
րութիւն չի ստեղծում մեզ համար նպատակին
հաննելու, թէկուզ նւազագոյն չափով. ուրեմն
ինչ անտեղութիւն կլինէր ներկայացած յար-
մարութիւնը ձեռքից բաց թողնել, մանաւանդ

որ մեզանից շատերը կամ խորշում են, կամ յար-
մարութիւն չի ներկայանում գիւղ գնալու և
տեղն ու տեղը ցանկալի տեղեկութիւններն ստա-
նալու,—պատասխանեց Վարդգէսը:

—Պարոն, դուք կամ ըմբռնելու քիչ ընդու-
նակութիւն ունիք, կամ դիտմամբ խուսափում
էք ճիշտ և ուղիղ պատասխան տալուց,—սուր տօ-
նով դիմեց կոստիան: Ես երբէք նոր նիւթի մա-
սին տեղեկութիւն հաւաքելը չեմ ժխտում, այլ
գտնում եմ, որ ներկայ դէպքում քիչ ծանօ-
թութիւն հաւաքած կլինէք. և երկրորդ՝ դրանց
ներկայութիւնը իր վատ և զգւելի հետեանքով
անդրադառնալու է մեր կեանքի վրայ. դրանից
պիտի խուսափել, որպէս չարիքների փոքրա-
գոյնից:

—Կոստիա, կոստիա, շատ իգուր այդչափ
եսական ես դառնում, — ասաց Մարգարիտը:
Նրանց ներկայութիւնից և մօտիկ լինելուց, որ
այնպէս գարշելի է թւում մեզ, այսպէս թէ այն-
պէս մենք չենք ազատւելու: Նրանք այստեղ են
ու այստեղ. մի քիչ մօտ կամ հեռու նստած լի-
նելը, այն էլ մի քանի ըոսէով՝ վնաս չի բերել
մեր փափկանկատ կեանքին: Ինձ թւում է, թէ
չի յաջողուելու կամ գիւղ գնալ, կամ նորէն պա-
տահել նման տիպերի, ուստի առիթը ներկայացել
է գէթ հետաքրքրւելու դրանց մասին, և ինձ կթոյ-
լատրւի, կարծեմ, մի փոքր խօսել դրանց հետ:

Կոստիան լոեց. լոեցին և ամենքը: Հարցը

սուր էր, որը իւրաքանչիւրի սեպհական և ինքնուրոյն կամքի մասին էր խօսում: Այդտեղ արդէն ոչոք ոչինչ չէր կարող ասել: Այդ միջոցին երկու գիւղացիներն էլ, որպէս կառքի ջարդւած անիւներ, լվկոտալէն ու իրար յետեկց, եկան իրանց տեղերը բարձրանալու:

—Բիձա, (հօրեղբայր բառի իմաստով) մւր էք գնում, —դիմեց նրանց Մարգարիտը:

—Է՞ն, խանում, (տիկին) մեր ի՞նչ գարդին կարող էք դարման լինել, — պատասխանեց հասակաւոր գիւղացին:

—Էլի, ասէք իմանանք:

Գնում ենք մի կտոր սև չոր հաց գտնելու, որ կրծելով ապրենք, մինչև որ մեռնենք, եախաներս պրծնի էս անիծւած աշխարհից. — պատասխանեց երիտասարդ գիւղացին. և ուզեց բարձրանալ իր տեղը:

—Նստէք էստեղ մի քիչ խօսենք, — առաջարկեց Մարգարիտը: Հարցը նրանց շատ խորթթւաց: Ի՞նչը պիտի ստիպէր նրանց իրենց հետ խօսելու, նրանք աղայ իրենք խեղճ ու կրակ գիւղացի, սակայն օրիորդի սիրալիր և հեղաբարոյ հայեացքն ու հրաւերը նրանց սպասեցնել տւեց: Հասակաւոր գիւղացու սիրաը ահուդոյ էր ընկել, նա խղճալի ու դոդոջիւն ձայնով հարցրեց օրիորդին.

—Խանում, մենք հօ ձեզ բան պարտական չենք:

Մարգարիտը հասկանալով նրա հոգեկան որութիւնը՝ շտապեց հանգստացնել նրանց.

—Զէ, չէ, բիձա, նստէք հէնց էնպէս խօսենք: Երկու գիւղացիները սիրտ առնելով նրատեցին Մարգարիտի նստարանի վրայ, երկի նըրա համար, որ ոչ մի բան դրանց պարտ չէին և սրանք էլ ոչինչ պահանջելիք չունէին նրանցից: Նրանք խօսում-պատմում էին գիւղացիների կեանքից, նրանց դրութիւնից և պատասխանում իրանց դրութեան վերաբերմամբ Մարգարիտի տւած հարցերին:

—Դուք նրտեղացի էք, բիձա:

Երևանի նահանգից:

—Ո՞ւր էք գնում:

—Գնում ենք քաղաք, հալբաթ մի կտոր հաց աշխատենք ու ապրենք:

—Դուք հող, այզի, տուն-տեղ, կին, զաւակներ չունէք, հիմք նրանց ով պիտի պահի:

Այս հարցը դառն ախ քաշեց նրանց սրտի խորքից: Նրանք երկուսն էլ, որպէս նախօրօք դասը սերտած երկու խոնարհ աշակերտներ, պատասխանեցին միասին.

—Ունենք, բա չունենք. նրանցից միքանիւն Աստւած պահել է, մնացածներին էլ կպահի:

—Ի՞նչպէս թէ մի քանիսին Աստւած պահել է, մնացածներին էլ կպահի, քնից արթնացածի նման մտածեց Կոստիան և հարցրեց նըրանցից:

Գիւղացի ճանապարհորդներն այս աղայ ու խանում ուղեկիցների մէջ զաան սրտակից բարեկամներ։ Նրանք մօտ զգացին նրանց և այդ պատճառով աւելի համարձակ դառնալով՝ սկսեցին պատմել այն բոլոր շարժառիթները, որ այնպէս դաժանօրէն իրենց անտանելի թշւառութիւնների պատճառ էին դարձել և իրենց այսօրւան պահին աստանդական էին դարձրել՝ լոկ մի կտոր չոր հաց գտնելու համար։ Ճանապարհորդ գիւղացիներից երիտասարդն աւելի խելօք էր երեսում, նա էլ սկսեց պատմել.

— Դուք հարցնում էք, «մւր էք գնում»։ Գնում ենք օտար քաղաք, օտար երկիր աշխատանք դժնելու, որ համ մեզ պահենք, համ մեր տուն ու տեղը, համ էլ մեր պարտատէրերի պարտքերը հոգանք։ Էս վէրան աշխարհում մեզ բաժին է ընկել անվերջ աշխատել, աշխատել եղան պէս, բայց միշտ էլ սոված ու տլլոր մընալ և ծանր ծանր պարտքերի տակ տնքալ։ Է՞հ, Բ՞նչ ամենք։ Էս բոլորը կամեցել են մեզ մարդիկ, որ խիղ ու Աստւած չունի։ Դէ մենք էլ հա պիտի աշխատենք, որ հարուստն ուտի, իսկ մենք էլ հա էսպէս մնանք։ Մի ժամանակ կար, պատմում էին մեր պապերը, համ խէր կար, համ բարաքեաթ (շահ և առատութիւն)։ Էն ժամանակ ապրում էին լաւ։ Մեր գիւղում 20 տուն կար, ամեն տեղ էլ մարդիկ քիչ էին, բայց մշակելի

հողը՝ շատ, բէրքն՝ առատ, էնենց, որ ամենքս էլ հարուստ էինք, ապրում էինք լաւ։ Ժամանակները փոխուեցին, մարդիկ շատանում էն ու շատանում, հողը բաւականութիւն չի տալիս, դրա համար էլ մարդիկ օր օրի վրայ աւելի և աւելի չարանում ու սատանայանում են, կորցնում խիղճ, հաւատ, հոգի և զազանի պէս իրար կրծոտում, իրար տուն քանդում։ Դէ մէջ տեղ վնասողը ով է լինում, — խեղճը, աղքատը, աստւածապաշտն ու նամուսովը։ Էսպէս մարդիկ ու Աստւած թշնամացան մեզ— խեղճ վաստակաւորներիս հետ, խեղճում են հա խեղճում։ մենք էլ թշւառացանք էս օրին հասանք. տեսնում էք, ահա էսպէս (ցոյց է տալիս իր վրայ)։ Մէկ մէկու յետեկից կարկուտը, անձրե չգալը, չոռը, տաւարի ցաւը, ջրի պակասութիւնը, ես ի՞նչ գիտեմ, հազար ու մի պատուհաս, ամենը, ամենը գալիս էին և դեռ գալիս են շարան շարան ու մեզ վնասում։ Մեր հացն է կտրւում, տաւարն անօթի մնում, հիւանդանում, սատկում, հազար ու մի հիւանդութիւնների ու փորձանքների ենք տիրանում. ոէ էս բոլորն էլ մեզ տուն-տնաւեր են անում ու էս օրին զցում։ Հարուստին ի՞նչ, նա հօ չի տիրում, այլ ուրախանում է մեր էսպիսի զրութիւնով, չէ որ զլխով ոտով ընկնում ենք նրա ձեռքը, հարցատանալու նորանոր դռներ են բացւում նրա համար։ Ճար նաչար զիմել և դեռ զիմում ենք էդ

բարեսիրաներին փող, հացահատիկ և էլ ուրիշ բաներ պարտք անում, որ տանենք աշխատանք անենք, համ մէնք ապրենք, համ էլ շահ ու տոկոսով դրանց պարտքերը տանք: Բայց, որ մէկ անգամ պարտք ենք վերցնում, էլ հօ չենք պըրծնում էդ անաստածների ճանկերից: Տուր, հատուր, որ պըծնես, էլի չես պըծնում: Տեսնո՞ւմ էք էդ մարդուն (ցոյց է տալիս իր համագիւղացու վրայ), սա ժամանակին դիրքով ու կարողութիւն ունեցող մարդ էր, դէ բախտի չարխը (անիւ) թարս գնաց ու էս օրին ընկաւ: Սա, էս ծերունին էլ մի բարի, աստածավախ ու խղճով մարդ էր. գիտէք սրա բարութիւնից քանի քանին են օգտւել, հաշիւ ու համար չկայ, ես էլ եմ օգտւել: Բարի էր, դէ սրա համար էլ էս օրին հասաւ: Մեր զիւղում մի քանի հարուստ մարդիկ կան, դէ ամեն տեղ էլ հարուստ, եավաճառական մարդիկ կան, մի դժբախտ դէպքի ժամանակ սա դիմում է էդ հարուստներից իւրեն բարամբար (հաւասար) կարողութիւն ունեցող մէկին և պարտք անում խանգարւած գործերը դրստելու համար. նրան թուղթ է տալիս, թէ պարտական է, դէ մինչև հիմի էլ պարտական է: Սա չորս տղայ և երեք աղջիկ ունէր, ինքը, կինը, հէրն ու մէրն էլ քանի կլինեն. էդքան մարդկանցով ժամանակի ընթացքում իւրենց տեղով տնով և ամեն ինչով մնում են պարտատիրոջ ձեռքերում, որպէս պարտապան.

Ամեն ինչ սրա ձեռքից դուրս է գալիս, և ամբողջ ընտանիքով ծառայ են դառնում նրան: Ծառայում են, հա ծառայում և էլի պարտքից չեն պըծնում: Դէ, հիմի նա հարստացել է. էսպէս են հարստանում, հօ էլ ի՞նչպէս պիտի հարստանան: Հէնց որ դիմում ես դրանց, էնպէս են ցոյց տալիս, թէ Աստծու մարդը, որ կայ՝ հէնց սրանք են. խօսում են խղճից, ազնւութիւնից և բարութիւնից. բայց յետոյ ամեն ինչ մոռանում են, էնէնց են խարում, ոտնատակ տալի ու փոսլ գցում, որ խիղճն ու հոգին ծախած սատանան էլ, գեն էլ էնէնց բան չի անի: Մի օր էդ պարտատէրը էնքան համարձակ է դառնում, որ ուզում է էս ըլնգազի (անձարտկոր) կնոջը ձեռք գցել: «Մուս», ասում է, «ձէն մի հանի և իմ կամքը սուս ու փուս կատարի. ես վատ մարդ չեմ, դրա փոխարէն ձեր պարաքի տոկոսի տոկոսը կրաշխեմ (ներեմ):»: Կնիկը գլուխ չի տալիս: Էն միւս օրը էս խեղճին են ծակը (բանտ) կոխում. մեղաւորը մարդը դարձաւ: Մեծ տղան էդ բանի համար չի կարողանում համբերել, խօսում է ու հարուստին հայհոյում: Միւս օրը զիւղի տանուտէրը նրան էնքան է գագանակի կապում, որ խեղճը դրանից յետոյ հինգ օր է ապրում միայն: էսպէս է էս անիրաւ աշխարհում, ոչ օրէնք կայ, ոչ դատաստան. օրէնքն էլ, զատաստանն էլ հարուստի, ուժեղի ձեռքին է: Մեռաւ մեծ տղան, խեղ-

ձացան սրանք, ու այնուհետև սրա կինն իր աչքի առաջ աղայով դարձաւ: Գլուխներդ հօ չէք բռնի, թէ որ ասեմ, էդ անամօթ հարուստը մինչև անդամ ուզում էր սրա հասած, մարդացու ազապ աղջկան էլ ձեռք զցի: Դէ էդ տանելու կեանք է, որ տանենք. դուք չէք տանի, բայց մենք տանում ենք, ճար չունենք: Մեր գիւղի վարժապետը քարոզում էր, որ մեր գիւղում մանր բանկ բաց անենք, ու էլ հարուստներից փող չառնենք, բանկից վերցնենք, քիչ տոկոս կտանք, դա լաւ է մեզ համար. բայց ի՞նչ. մի շաբաթ յետոյ խեղճ վարժապետի սպանւած ջանդակը այգիներից բերին:

Է՞ն, որ մէկը պատմենք. էդ հարուստները գողերի, աւազակների հետ ընկերանում են, գողացնել տալիս ուրիշի մալը, սպանել տալիս մարդկանց ու կողոպտում և իրանց մէջ բաժանում, գիւղի մեծին էլ բաժին հանում, և յետոյ որ ամեն հետք կորցնեն՝ էս կամ էն անմեղ մարդու արիւնն են մտնում, մեղքը նրա վրայ զցում ու քշել տալիս: Դէ էդ անաստած հարուստները կորցրած խիղճ, հոգի, դատաստան՝ անում են իրենց անելիքը: Աստւած էդ թաւուրներին չի պատժում. սուտ է, Աստւած էլ նըրանց կողմն է:

Մեզնում հարուստները մեր նման մարդկանց արիւն քրտնքով են հարստանում. վաճառական են նըրանք, թէ տոկոսով փող տւող՝ մէկ

է: Կարելի է, որ ամեն տեղ էլ էդպէս է: Թէ որ գող, աւազակ, մարդասպան ու ամեն տեսակի խայտառակ մարդիկ էլ լինեն դրանք, լաւ մարդ են հաշւում, փող ունեն. դրա համար էլ բոլոր մեծամեծները դրանց բարեկամն ու կողմնակիցն են, նըրանց խաթրը պահում են, նըրանց ուզած խնդիրը կատարում: Դրանք, թէ որ մի բանի մէջ մեղաւոր բռնւեցին, հարստութեան ուժով արդար են դուրս գալիս. իսկ մեզ նման մարդիկը դրանց ոտների տակ, ինչպէս հողը քուչէքում (փողոց), տրորւում են, հա տրորւում, մինչեւ որ մի քամի գալիս է նըրանց վերացնում ու ազատում է էս անիրաւ ու անարդար դժոխք աշխարհից:

Ահա ձեղ օրինակ. էս մարդու ամբողջ մալ ու մուլքի, տուն ու տեղին տէր դառնալուց յետոյ, ճորտացրին նըրա ամբողջ ընտանիքը, բըռնաբարեցին կնոջը, սպանել տւին որդուն, վախից հիւանդացան ու մեռան աղջիկն ու միւս տղան, խէնթացան կսկծից ու մեռան հէրն ու մէրը, իսկ ինքն էլ, ինչպէս տեսնում էք, անձարացած գնում է օտարութիւն, որ աշխատի ու բերի համ տան մնացածներին պահի, համ պարտքնտիրոջ պարտքը տայ ու արուրն (թաւսիբ—ամօթխածութիւն ու պատիւ) իրեն՝ ապրի:

Դէ ասում էք, Աստւած ոնց է պահում. ահա էսպէս՝ մի քանիսին գետնի տակը հանդիսաւ, իսկ միւսներին՝ գետնի երեսին տանջւելիս: Էդ

անսիրտ ու անողորմ հարուստների ձեռն էլ հէնց ընկար, էլ հոգիդ էլ ծախես չես ազատւի: Դրանց հարստութիւնը էդ տեղից է դիզւել. ամեն տեղ էլ էդպէս կլինի, հօ էլ ուրիշ կերպ չէր լինի, մեր թշւառ ու անբախտ հալն էլ զրա հետևանքն է: Դէ, հիմի գնում ենք մի կտոր հաց ճարելու. ի՞նչ անենք:

Երիտասարդը վերջացրեց իր ասելիքն ու լոեց: Հասակաւոր գիւղացու սիրտը ալեկոծւող հնոց էր դարձել, և աչքերը լցւել ու ուռել էին: Նրանք ուռան, ուռան և երկու խոշոր կաթիւներ կազմելով՝ կոշտացած ու սպիտակահեր դէմքի վրայից գլորւեցին ցած: Նրանք լացի արցունքներ չէին, քարացած սիրտն այլևս լաց չի լինում: Նրանք սև իրականութեան դաժան յիշողութեան հետ խառնւած զայրոյթն էին, որ որպէս հսկայ լեռ, իրենց ծանրութեամբ ճիշտում էին նրա սիրտն ու հոգին: Հոգու ալեկոծող փոթորիկն էին նրանք, որ փղձկալով դուրս էին ժայթքում և սփոփանք ու հովութիւն պատճառում այնքան դառնացած ու յօշութած սրտին:

Մարգարիտն ու Վարդգէսն ապուշ կտրած՝ անշարժ միմեանց էին նայում: Կոստիան անհաւատալի հայեցքով պատմութիւն անող երիտասարդին էր հետեւում: Կասկածները փարատելու համար, նա ամենայն ուշադրութեամբ հետեւում էր պատմողի ասածների մէջ հակառակութիւններ գտնելու, որովհետև նրան այնպէս

էր թւում, թէ պատմածների մէջ քիչ ճշմարտութիւն պիտի լինէր: Դառն օր չտեսնող մարդը դառնութիւն քաշողի կեանքի մասին տեղեկութիւն չի կարող ունենալ. նրան շարունակ կրթի, թէ ամենքն էլ իր նման կեանք են անցկացնում:

Գնացքն արդէն մօտենում էր Թ. քաղաքի կայարանին: Դէպի Թ. քաղաք գնացող բոլոր ճանապարհորդները կապկառում էին իրենց իրեղէնները և պատրաստում ցած իջնելու: Պատրաստեցին և մեր ճանապարհորդ գիւղացիները: Նրանց ամբողջ իրեղէնը մի մի ոչխարի փոստից, բուրդը դէպի ներս կարւած, հնամաշ պատառուած խալաթներ էին և ուրիշ ոչինչ: Նրանք ուների ծայրերով բոթելով հանեցին նստարանի տակի թագստատեղից իրենց երրորդ ընկերոջը: Սպասում էին նրանք գնացքի կանգնելուն, որ ցած իջնեն, արդէն հասել էին իրենց ուզած քաղաքը:

Մարգարիտը նրանց դրութեան նկարագրութեան պատմութեամբ շատ էր սրտաշարժւել: Երբ գնացքը կանգ առաւ ու նրանք ուզում էին ցած իջնել՝ տւալ նրանց մի մեծ փաթեթ ու տեղեղէն և մի մի թղթադրամ: Նա խնդրեց գիւղացիներին, որ անպատճառ վերցնեն, նրանց պէտք կլինի անծանօթ քաղաքում: Գիւղացիները մէկ կարմրեցին, յետ քաշւեցին, մէկ էլ մօտեցան, ընդունեցին այդ բարիքը, սրտալի շնորհա-

կալութիւն յայտնեցին ու ցած իջան։ Դեռ երբէք իրենց զամքով այնպիսի ծանը դրութիւն չէին տեսել նրանք. փշերի վրայ էին կանգնած։ Առաջին անգամն էին պատահում մարդկանց, որ առանց յետ ստամալու օդնութիւն էին հասնում նրանց։ Դա հաղարտ հոգին խեղող ողորմութիւնն էր։ Բայց և երբէք այնպիսի քաղցր բոպէներ չէին ապրել նրանք, որ մարդիկ այնքան բարի, այնքան սրտաբաց լինէին դէպի նրանց։

Հսկայ քաղաքն իրեն ծոցն էր ընդունում երեք նոր, անձանօթ սովածների, որտեղ նրանք որոնելու էին իրենց բախտաւորութիւնը։

III

Զմերային սոսկալի գիշերներից մէկն էր։ Հսկայ քաղաքի լայն փողոցները լուսաւորւած էին ելեքտրական և գազային լուսաւորութեամբ։ Մեծ արհաւիրքի պատճառով փողոցներն ամայացել էին, երթևեկութիւնը՝ գագարել։ Երբեմն երբեմն փողոցով, ոտից մինչև գլուխ տաք մուշտակների մէջ կոլուած, շտաղ շտաղ անցնում էին մարդիկ։ Նրանք, որպէս երկանիւ կառքեր, թւում էր, գլորեկով վաղ էին տալիս, քան շտապում։ Անցւորականների ոտների տակ ձեան սառած հաստ շերտը տնքում էր հոգեարքի ցաւից և, որպէս անսահման ու դարաւոր բողոք, ահազին ճոխնչ ու աղաղակ էր բարձրացնում։ Կապուտակ կամարի հազարաւոր վառ աչքերի տակ լացի այդ աղաղակը, որպէս մեռնողի աղօթաերգ, գթութիւն էր հայցում անսահման ու անսիրտ երկնքից։ Եւ հիւսիսից, որպէս փրկութեան սլաք հիւսնդի թարախակալած մարմնի ցաւող ուսոյցը պատռելու, վնաստակէն դաժան սառնամանիքն էր վաղում երկրի երեսից բոլոր խոնաւութիւնները սրբելու, չորացնելու խսպառ։ Անց-

ւորականի շնչի խոնաւ հոսանքը, որպէս վախ-
կոտ նստաստակ, շտապում էր դուրս փախչել
տաք մուշտակի տակից, և նրա խոնաւ մա-
զերը սառչում էին ու սառչում, ելեքտրա-
կան ու գազային լոյսի տակ պաղպում էին
և փայլեր արձակում: Նրանք ժպտում էին իրանց
անթարթ նայող երկնային հազարաւոր վառ ա-
չերին ու նրանց հետ միասին սառցային բնութեան
խորհրդաւորութեան մասին փսփսում: Ցուրտ էր,
շատ ցուրտ. Իեմիւրի ջերմաչափի $35^{\circ}/_0$ ցած:
Սառնամանիքն ինքը զայրոյթից ու սարսափից
ճայթում էր, և նրա մահաշունչ արհաւիրքից
վախեցել ու սառել էին փողոցներում ցերեկով
վառած ահազին խարոյկները, ասես նրանք, որ-
պէս գնդակահարւած կենդանիներ, զիշերներն
իրաւունք չունեին տաքութիւն և կենդանութիւն
պահպանելու: Նրանք լոյսին միայն անցւորակա-
նին սառչելուց պահպանելու բոպէական վառա-
րաններ էին, իսկ զիշերները վախկոտութիւնից
մարող՝ ինչպէս ինքը խաւարը լուսաբացին:
Քաղաքի մեծ փողոցի գեղեցիկ շինութիւնների
գեղազարդ ճակատներից կախ կախ թափւել էին
նրանց դէմքերին ցրտից քար կտրած սառցէ
լուլաներ, որպէս ութսունամեայ ծերունու սպի-
տակափառ երկար մազերը, որոնք այսպէս ան-
խնամ ծածկելով նրա դէմքը՝ չեն թոյլ տալիս
որոշել նրա գծագրութիւնը: Զէին երեսում հրա-
շալիք ներկայացող խանութների հսկայ լուսա-

մուտների յետեսում ցոյց դրւած, գեղեցիկ ներ-
դաշնակութեամբ շարւած առարկաներն ու թան-
կագին ապրանքները. Նրանց փոխարէն ապակի-
ներից նկատելի էին միայն գեղազարդւած ան-
նման սառցէ պատկերներ: Բնութիւնն իր գե-
ղեցկութիւնն երբէք չի կորցնում: Նա միշտ
հմայիչ է, և ահա սոսկալի ձմրան այս պահին
անգամ, որպէս զւարձութիւն ու միխթարանք,
մարդկանց կարօտն է յագեցնել տալիս, գեղա-
նկարելով ապակիների վրայ սառցէ հաստ շեր-
տով ամարային գաշտերի, այգիների ու պար-
տէզների, տափաստանների ու լեռների, հմայիչ
բնութեան և կենդանական աշխարհից աննման
պատկերներ և մարդու հոգին լցնում ըոպէա-
կան քաղցը վայելիքների, մշշողութիւնների խա-
փուսիկ յոյզերով:

Յունւարի հինգի գիշերն էր այդ, Քրիստո-
սի ծննդեան հրաշափառ գիշերը: Մարդիկ ամա-
յացրել էին փողոցներն՝ իրենց տաքուկ ու զը-
ւարթ բնակարանները քաշւած: Տարին մէկ ան-
գամ այս պահին, հոգեկան ու մարմնական գեր-
բաւականութիւններով, ինքնամուացութեան աս-
տիճանի զւարձութիւններով էին գիմաւորում
Քրիստոսի ծննդեան տօնին: Քրիստոնեայ մարդն
այս գեր հաճոյքն ունի, որի շուքը չկորցնելու
համար, հարուստ թէ աղքատ, հնարաւորին չափ
ոչինչ չի ինայում:

Փողոցի շինութիւնների վերին յարկերից

լուսող քաղցր երաժշտութեան և սրտառուչ երգերի մելոդիական զմայլիչ գալարները, համարձակ ու անվախ, որպէս խենթ ոգիները, դուրս էին վագում փողոց և ամեն մի թըշւառ անցւորականին պատահելիս՝ ծաղրում էին նրան, թափ անցնում նրա հոգու խորքը, զարթեցնում նրա զիմում խելացնոր մտքերի անթիւ շարքեր ու անդադար փսփսում.

—Դու ի՞նչ ես, ինչու ես քաշ գալիս այս դաժան ժամին անկենդան փողոցներում, ինչու ես ապրում, երբ արհամարհւած ես, որպէս փողցի քաղցած ու դողացող շունը։ Տես, ահա այստեղ—այն տաք ու շքեղ բնակարաններումն է, ուր մարդիկ անկարօտ են ու բախտաւոր, ուր նրանք ուզած իսկական կեանքն են անցկացնում։ Ու խղճալի, փողոց շպրտւած պատահական անցւորականի աչքերը չորս էին կտրում, ականջները՝ խշշում, իսկ ուղեղում ցցւում էր.—ապրելը դա է։ չէ որ կեանքի հալածականները զուրկ են միանգամայն այդպիսի վայելքներից։ Թշւասի վիճակն է՝ սոված ու տկլոր, անտուն ու անտեղ իր խղճուկ գոյութիւնը փողոցներում, կամ փողցանման խուղերում քաշ տալ։ Եւ այդ գիշեր միայն, ասես, անտուններն էին փողեցները շըշում։ Ամեն անգամ այսպիսի վայելքների պատկերների հանդիպելիս՝ նրանց հոգին ու միաքը գամտում էր, սիրտը ճմլում, անթիւ ու անհամար անքուն երազներ տեսնում, թէ իրենց էլ

է սպասում նման փառահեղ կեանք. աշխարհում ամեն ինչ փոփոխական է, շուռ կըգայ անիւը, իրենք էլ լաւ օրի երես կտեսնեն։ Խղճուկ անցւորականներն այսպէս էին մխիթարւում։ Ապրում են նրանք ու մեռնում, մեռնում են և ապրում, ու անվերջ սպասում։

Գիշերւայ այս անյուսալի ժամին փողոցի մի ծայրից միւսն էր անցնում մի անցւորական։ Նա սովորական մարդկանցից չէր. ոչ մուշտակ ունէր, ոչ տաք զիմարկ և ոչ կրկնակօշիկ։ Նրա արտաքին տեսքը կարծել էր տալիս, թէ նա կամ ճանապարհը կորցրած, կամ աւագակներից կողոպտւած մարդ էր, որ դեռ շշմած դրութիւնից չսթափւած, անտարբեր, սոսկալի սառնամանիքին հանդարտ քայլերով փողոցն էր չափում։ Մաքուր հագնւած, վայելչակազմ մի երիտասարդ էր նա, որ ամարային վերարկուի մէջ կծկեցնելով իր օսլայած շապկի վիզը, կամ վերարկուի օձիքը շարունակաբար վեր պահելով՝ աշխատում էր վիզն ու ականջները ազտել ցրտից խաշւելուց։ Այդ նրան չէր յաջողւում, որովհետեւ օձիքը ցածը ու կարճ լինելով՝ չէր ծածկում նրա դէմքի և զիսի ուզած մասերը։ Նա ստիպւած էր իր պարանոցը կծկեցնել, ներս քաշել քիթն ու պոռւնկը կոճկած վերարկուի օձիքի վերին մասում թագցնել ու բերանի անընդհատ և արագ արագ արտաշնչող տաք գոլորշիով ցրտի դէմն առնել։ Վերջին միջոցն էլ մեծ բա-

ըիք չեր տալիս։ Խոնաւացած օձիքը և սրան սեղմած բեխաւոր ու միրուքաւոր քիթն ու պոռւնկը նորանոր խոնաւ արտաշնչած գոլորշիներում սառուցի շերտի էին վերածւում։ Եւ նա իր քիթն ու պոռւնկով, դէմքի մազերով մեխւած էր վերարկուի օձիքի հետ սառուցի հաստ շերտով։ Զեռնոցներ նա չունէր։ Զեռները ցըրտից պահելու համար խաչել էր կրծքին, իւրաքանչիւր ձեռը միւս ձեռի թևի մէջ կոխել, այսպէս խորը, որ մատները մինչեւ արմունկներն էին համառում։ Խոնաւ կօշիկներն այնպէս էին չորացել ու կծկւել, ասես, բարկ վառարանի մէջ այրւած ու կծկւած կաշւէ կուտ լինէին։ Նրանք ներսից և դրսից սառուցի այնպիսի շերտով էին ծեփւել, որ նրա ոտներն ու ոտների մատներն այլևս շարժւելու ու զգալու կարողութիւն չունէին։ Եւ նա ոտներն ուժով վեր էր բարձրացնում ու փոխելիս՝ այնպէս թրիկալէն ցած գըցում, ասես, նա իր սրտի վրէժը գետնից էր հանում, որ այնպէս աղիողորմ տնքում ու ճըռճում էր ոտների տակ։

Երկար ժամանակ նա ման էր գալիս։ Գիշերւայ ժամը չորսն էր, այդ նա խմացաւ ժամացոյցների զանգերի հարւածներից, սակայն այդ դրութեամբ նա շարունակում էր քայլել ու քայլել փողոցի մի ծայրից միւսը և յետ գալ երեմն երեմն նա նստում էր այս ու այն տան դռան ծածկւած պատշգամբների քարէ աստիւ-

լով, ամենամեծ մրցակիցը մնալով Բիւղանդիոն՝ ուր որ կրնար։ Եւ նաեւ այն զարհութելի անկմանէ ետքը, երբ Ղլիճ-Ասլան Ա. մը դրեթէ ամբողջ Փոքր-Ասխան գրաւած էր, Բիւղանդիոն բախտ ունեցաւ նորէն գտնելու իւր ոյժը մասամբ, զլիսաւորաբար չնորհիւ Խաչակրաց՝ որոնք ջախջախեցին Սելճուկները Նիկոյ եւ Դորիւլիոնի քով (1097), որով կրցաւ Ալեքսիոս Կոմնենոս մը յաջող պատերազմներ մղել անոնց դէմ եւ ստիպել՝ Պողիւրոտոսի քով մէծ յաղթութենէ մ'ետքը (1116), իրական նպաստաւոր դաշինքի մը, եւ ազատել ամբողջ փոքրասիական արեւմուտքը (1117)։ Դժբախտաբար սակայն բիւղանդական նոյն զէնքը եթէ կը դառնար Սելճուկեանց դէմ, նուազ չէր հարուածեր նաեւ քրիստոնեայ մանրապետութիւնքն, եւ օրինակի համար՝ երբ Յովհաննէս Բ. Կոմնէն (1118—1143) Սելճուկները կը մէրժէր յաջողութեամբ, եւ Սերաստիո Դանիչմանց Կոնի (Ղոնիա) «Հոռոմ»—Սելճուկեանց հետ դաշնադրութեան պատճառաւ՝ յաղթանակաւ կը հասնէր Նիկոսի եւ կը հասուածէր Թաթարները (1139/40), իւր զէնքը նուազ չէր գարձըներ Կիլիկեան Հայոց եւ Անտիոքյայ լատին դքսութեան դէմ, որով Հայկական Կիլիկիա իրապէս կործանման դուռ հասած էր (1137—1141)։ Նոյնպէս Մանուկէ Կոմնէն կայսրը (1143—1180) եթէ Կոնի «Հոռոմները» մինչեւ քաղաքը յետո մղեց, նուազ չմնասեց նոյնպէս Անտիոքյ

էղղին Քայ Խոսրով Բ.), որոնք միաբանութեամբ մեծ բանակ մը հասցուցին Մոնղոլաց դէմ, բայց Կարնոյ եւ Երզնկայի միջեւ լիակատար ջախջախիչ եւ վճռական պարաւթիւն մը կրեցին։ Մոնղոլք ողողեցին ու այրացաւեր ըրին բոլոր երկիրները՝ Երդնկայէն մինչեւ Կեսարիա ու Անկիւրիա (1244)։ Իսկ Բաղդատի տիրելով եւ ամբիրապետութեան բարձմամբ (1258), Մոնղոլ Թաթարաց ձեռքն ինկաւ Միջազգետք, Ասորիք եւն, եւ առհասարակ ամբողջ արեւելք։ Ղոնիոյ սուլտանութիւնն՝ որ մնաց տակաւին միջոց մը, աւելի անուանական էր, եւ քայքայեցաւ ի վերջոյ նոյն դարուն վերջը, երբ արդէն Օսման ալ հիմ դրած էր իւր պետութեան (1288)։ Յաջորդ շրջանին Լէնկթիմուրի սարսափներուն, որ Անկիւրիոյ քով ջախջախեց օսմանեան բանակը (1402), ամենամեծ սարսափներէն մին տեսաւ Սեբաստիա։ Օսմանեան տիրապետութեամբ կը փակուի այն պատմութիւնը՝ զոր միայն ուրուաղծեցինք, որչափ մեր նողասակին համար պէտք էր։

Ճանների վրայ հանգստանալու, բայց շուտով վեր էր կենում ու նորէն չափում իր երկար, այնքան երկար ճանապարհը, որ երկի վերջ պիտի առնէր լուսաբացին։ Նա այս անբարեյոյս ժամանակին մենակ ու մոլար, տխուր ու անտրապունջ իր ճանապարհն էր քայլում, իր վիճակի օրը ողբալէն անցկացնում, որպէս ամայութեան մէջ մենակ թագաւորող բուն, որ կեանքի արհաւեկրքի ու թշւառութիւնների մահագուժ երդն է երգում։

Նա մէկն էր հազարաւորներից։ Այս քաղաքում ծանօթներ ու բարեկամներ չունէր, որոնք նրան ապաստան տային – կերակրէին, ինքն էլ միջոցներ չունէր, որ կարողանար առանց նեղութեան ապրել։ Վերջին կոպէկը երեք օր առաջ էր ծախսել, մինչև այժմ առանց մի սլատառ հացի կարողացել էր ապրել և կապրէր երկար, գործ ածելով իրեն համար սովորական դարձած կերակուրը, – ջուրը, անխառ մաքուր ջուրը, եթէ զոնէ գիշերելու տեղ ունենար։ Տան տիրոջը քրէնը չվճարելու համար տանից դուրս էին արել նրան և 17 օրւայ վարձի տեղ նրա բոլոր իրեղէնները պահել։ Այժմ նա անտեղ ու անապաստան, Քրիստոսի հրաշափառ ծննդեան գիշերին շրջում էր մենակ, որպէս մահան ոգին, դողում էր՝ որպէս ինքը սառնամանիքը, գունստ ու կծիկ էր դարձել՝ որպէս անձունի ողնին, պարանոցով ու իրանով սառել,

փայտ էր կտրել՝ որպէս ինքը խոզը և շարունակում էր գլորւելով քայլել, նստել—վեր կենալ և այսպէս անընդհատ...

Քաղաքում կատարեալ մեռելութիւն էր տիրում։ Խանութապահ-գիշերապահներն էին, վաղ երեկոյից իրենց պատրաստութիւնները տեսած՝ այժմ հանգիստ մրափում էին իրանց փայտէցած ու նեղիկ պահականոցներում։ Նրանք շատ աւելի բախտաւոր էին, քան այս անծանօթ աստանդական թափառականը։ Նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում պատահող պահականոցի առաջ, ներս նայում, կրծտացնում ատամները և նորից շարունակում ճանապարհը։ Նա նախանձում էր նրանց, այդ թշւառական գիշերապահներին, որոնք աշխարհից զուրկ էին, ինչպէս ինքը, բայց այս գիշեր իրենից աւելի բախտաւոր էին։ Նրանք ոտից մինչև գլուխ փաթաթւած էին հաստ ու տաք քուրքերի մէջ, հազել երկտակ թաղիքէ երկար ճտերով տաք ուսնամաններ, փոստէ վը թաշափ փափախները խրել մինչև ականջները, ուսների արանքներում մշտավառ պահած ունէին քարածուխի փոքրիկ ու տաք կը ակարաններ, կուշտ կերած՝ խոռալէն մրափում էին։ Նրանք պահականոցներում էին և ազատ սառնամանիքի սուլող ու չորացնող քամու հոսանքներից։ Այդ ժամին, այդ բոպէին բոլորը, բոլորը բախտաւոր էին. իսկ ի՞նքը...

Անցւորականը ցրտից արգէն անզգայանում

էր, խօսել անգամ չէր կարողանում, միայն գըլուխը, հսկայական ու անվերջ մտքերի այդ ծովը չէր դադարում գործելուց։ Յանկարծ նամտածեց, թէ կարելի է մտնել մի պահականոց ու քիչ տաքանալ։ Մտածածը նա իրագործեց, առաջին իսկ պատահած պահականոցը մտնելով. այնքան նեղ ու փոքր էր նա, որ հազիւ մի մարդու տեղ էր անում։

—Ի՞նչ ես ուզում, — մումոաց քնաթաթախ պահապանը իսկոյն զարթներով։

—Ոչինչ, ուզում եմ մի փոքր տաքանալ, — պատասխանեց անցւորականը, հազիւ կարողանալով սառած բեխերի և օձիքի արանքներից բառերը դուրս շպրտել։

—Դու էս ժամին ի՞նչու ես դուրսը, ի՞նչու ես թափառում։

—Ես առն չունեմ, ինձ տանից դուրս են արել, փող չունէի քրեհը տալու. սառել եմ, թող մի փոքր տաքանամ, երթամ։

—Սուտ ես ասում, դու գող ես. գողերն են այսպէս լաւ հագնւում. խեղձ մարդիկ իրենց վերարկուն էլ կը ծախեն ու առն կվարձեն...

—Դու հօ հարուստ մարդ չես, այ պահապան։

—Խելքդ կորցրել ես, թշւառական, որ հարուստ լինէի, շաննման մոռթս թաթերիս վրայ դրած այս սառնամանիքին այսպէս պահպանութիւն կանէի աղաների համար։

—Թէ որ հարուստ չես, ես էլ հարուստ չեմ.
որ հարուստ լինէի էս ըոպէիս տուն կունենայի
և էսպէս չէի թափառի ու մրսի: Չես թողնի
մի քիչ տաքանամ, ես գող չեմ որ...

—է, եղբայր, էսպէս ամենքն են ասում,
որ մէկին հաւատաս. գողն էլ լաւ մարդու պէս
է խօսում, ծառան էլ, տէրն էլ, լաւն էլ, վատն
էլ... է՞ն, ես քեզ չեմ ճանաշում, թէ դու ի՞նչ
ես, շուտ արա, էստեղից գնա, թէ չէ, այ, կու-
տացնեմ: Նա ցոյց տւեց ձեռքի հաստ մահակը
և կողքից կախւած սուրբ: —Այ, այստեղ, մայ-
թի վրայ ցերեկն անցւորականների տաքանալու
համար կրակ էին վառել, էլի տաք կլինի, գնա
տաքացիր: Խանութին մօտ չգաս, թէ չէ՝ կու-
տես, հա, հասկացար, դէ, շնուր, գնա...

Սնծանօթ անցւորականը սարսափեց, վա-
խեցաւ պահապանից: Նա կարող էր, թէ կուզ
ստից նրան գող հրատարակել, ծեծել և դեռ
հարայ գցելով բռնել տալ: Զգաց, հասկացաւ նա
այդ նոր դառնութեան ոյժը և շտապեց հեռա-
նալ այդտեղից, շեշտակի ու ծուռ նայելով պա-
հապանի վրայ: Նա քայլերն ուղղեց գէպի այն
կողմը, ուր ցոյց տրւեց կրակը: Որոնեց նա,
գտաւ խարոյկի հանգած կոյտը, քրքրեց նրան
ոտով, բայց կրակ չգտաւ. նա դեռ, հազիւ հազ
միայն մի փոքր տաքութիւն էր պահել իր մէջ:
Անցւորականն, ասես, իր փրկութիւնը դտաւ.
ոտներն ու ձեռները կծիկ անելով դէմքն ի վեր

կծկւեց ու նստեց նրա վրայ սառչելուց ազատ
մնալու համար:

Տաքաննում էր նա, արդեօք, թէ չէ, այդ նա
ինքն էլ չէր զգում. միայն խիստ սառած լինե-
լը, երեք օրւան սովածութիւնը, անչափ ման-
գալու յոգնածութիւնը բոլորովին ուժասպառ էին
արել նրան, և նա այնպէս թուլացած, այնտեղ
էլ քուն մտաւ:

Հիւսիսից սուլող ու խաշող քամին, որպէս
քաղցը երաժշտութիւն, իր այ, ույ ու ուներով
օրօր էր երգում նրան: Այժմ նա լաւ, շատ լաւ
էր զգում իրեն: Ահա նա խանութը թող տւեց.
փողերը գրապանը, կառք նստած՝ տուն եկաւ:
Գրասեղանի առաջն է նստած ու փողերն է հա-
մարում: Հարստացել է նա. որքան և համա-
րում է փողերը, այնքան նրանք վերջ չունեն. հա-
մարած փողերը դարսում է թանկագին գրասե-
ղանի աչքերը, բայց դարսելով չի պրծնում:
Վերջացը էլ է գործը և ըրջապատւած է հարա-
զատներով ու սիրելիներով: Նրանք բոլորն ու-
րախ են և գոհ: Կեանքի ոչ մի բարիքը չէ պա-
կասում նրա տանից: Երաժշտութեան և գեղեց-
կութեան ոգիները սիրուն ներդաշնակութեամբ
պար են բռնել և թեատարած սաւառնում ու
պատում են նրանց յարկի տակ: Նրա սիրտն ու
հոգին երջանկութեան անդրբութիւնն է վայե-
լում. նա սլացել է վեր, շատ վեր, անմահների
ու հաւերժահարսների գրախտանման աշխարհը,

ուը տանջանք, կարօտութիւն և թշւառութիւն չկան, որտեղից յաւէտ ամդարձ դուրս է քշւամահւան ոգին, որտեղ կենսուրախ բաւականութիւնների երանութիւնն է թագաւորում։ Ահա սովորականի պէս, կինը մօտեցաւ նրան, ընկանրա գիրկը. փաթաթւեցին ու գրկեցին իրաւամուր, խնամքով ու կարօտագին սիրով, համբոյրներ, քաղցը համբոյրներ քաղեցին միմեանցից, որպէս դարերի կարօտը քաշող, որպէս ել դում՝ էլ մի ժամ, մի ըուպէ չքաժանւել իրարից Ահա, իրենց սենեակից դուրս գալով՝ ճիշ աղաղակով դէպ՝ իրեն են վազում իր սիրել զաւակները, փարւում են հօրը։ Հերթով բարձրացնում է նա այդ փոքրիկներին, սղմում կըրծքին, կուշտ, կուշտ համրուրում և ապա կուռնում է նա ու կարօտակէղ երկու ձեռքերութուրին, բոլորին գրկում, որոնք այնպէս ամուֆարւել են իրան, և մէկ սրան մէկ նրան համբարում։ Զաւակների մէջ մէկը—իր մեծ աղջկը չկայ։ Բայց ահա դահլիճից լսում է դաշնամուրի լացը։ Նա այնտեղ նւագում է յափշտակւած, նւագում է այնպէս քաղցը ու գրարին այնպէս ախորժալուր ու սիրատենչ, որպէս սիրոց այրւած սոլսակի հոգեզմայլ երգը վաղորդեան կարմրաթուշ վարդի թփի վրայ։ Ուսների մատների վրայ նա մտնում է դահլիճ, մօտենում աղջկան, կանգնում նրա յետեր և գաղտագողի ու զմայլւած լսում է երգն ու նւագը։ Ուռնաւ-

նում է նրա հոգին, լցւում սիրտը և նա յանկարծ գրկում է աղջկան, սխմում կրծքին, հպում շրթունքները նրա շրթունքներին պինդ պինդ ու անվերջ համբուրում նրա շրթունքներն ու մատիկները, որոնցով նւագում էր այնպէս քաղցը, այնպէս սիրալիր։

Ահա նրանք բոլորն էլ միասին են, բոլորել են ճաշի սեղանը, օրը խինդ ու ծիծաղով է անցնում։ Սեղանի վրայ դարսւած են ամեն տեսակի ազնիւ կերակուրներ, խմիչքներ և կանաչեղին։ ուտում են ախորժակով։ Նրանք ճաշը վերջացրած զբունելու են դուրս եկել. գարնանային զով եղանակին սիրուն և բազմերանգ, բուրաւէտ ծաղիկների ծաղկանոցի ճեմելիներով են անցնում։ Մօտենում են նրանց շատ աղքատ ու փողրիկ աղջիկ—տղայ, ծաղկեփունջեր առաջարկում, ողորմութիւն խնդրում, և նա աջ ու ձախ տալիս է, չի խնայում։ Ահա մութն ընկնում է, երկինքն ամպում, անձրև է գալիս և նրանք թրջում ու մրսում են. տուն են շտապում...

Ահա, ոչ հեռու, ինչ որ աղմուկ-աղաղակ է բարձրանում. կուռում են ու քարերով և փայտերով միմեանց խփում։ Ահա քարերից մէկն իրան կպաւ, ահա երկրորդ հարւածը, երրորդը, չորրորդը... և նա ցաւ է զգում...

—Ե՞ս, անտեր, վեր կաց, այստեղ քնելու տեղ չէ, բոթում էր նրան փողոցի պահապանը։

Նա քնաթաթախ գլուխը, ահազին ծանրութեամբ, որպէս ջրից դուրս — ցամաք քաշելի բեռի ծանրութիւնը, վեր բարձրացրեց: Հիւսիսային սառը քամին շարունակում էր վնդստալ ու իր երգը մոմռալ — այսու ու ու ը՛վ ֆու ու ի՛ լ՛վ... Շուրջն սպիտակ սառցէ սաւանն էր փուած դեռ, իսկ կողքին, որպէս հոգէառ սատանայ, տաք վերարկւի մէջ փաթաթւած՝ փողցի պահապանն էր կանգնած. նա նրան բոթում էր, աւելի շուտ ծանր հարւածներով քոթկում էր, որ վերկենայ:

— Ե՞ր, բարեկամ, միթէ էստեղ, էս լայն ու արձակ փողցումն էլ մենք տեղ չունենք, ի՞նչ ես խանգարում, հանգիստ թող...

— Վեր կաց, փողցում չի կարելի քնել:

— Ո՞ւր գնամ:

— Ուր կուգես գնա:

— Ես տեղ չունեմ:

— Գնա ծանօթի կամ ընկերոջ մօտ:

— Ծանօթ և ընկեր էլ չունեմ այստեղ:

— Շատ մի խօսա, բերդում ընկեր կդանես:

— Ի՞նչ եմ արել, որ բերդ տանէք:

— Հենց այն, որ կարգն ես խանգարում, փողցում պառկել չի կարելի:

Այլ ես չխօսեց անծանօթը, նա հաշտւեց իր դրութեան հետ, ինքն էլ հասկացաւ, որ չի կարելի: Լոյսը բացւում էր, ժամացոյցների զանգերը հինգը խփեցին: Կայծակի արագութեամբ

մէկը միւսի յետեկից նրա գլխով շատ մտքեր էին անցնում այդ ըոպէին: Հակառակելին յանցանք պիտի համարւէր, այդ նա գիտէր արդէն, ուրեմն պիտի վեր կենար ու գնար, թէ չէ, շուտով փողցի երթևեկութիւնն սկսւելու էր, իր այս դրութիւնը տեսնողների տհաճութիւննը կըշարժէր. այդպիսի երևոյթի վերացնելը սրբագործւած կարդ էր ընդունել: Նա գիտէր, որ եթէ մնալու էլ լինէր այստեղ, հազիւ իրեն իըդմահարւող պատահէր. եթէ իր դրութեան մէջ եղած մարդիկ, որ պատահաբար գործի — պաշտօնի էին անցել, ոչ մի խղճահարութիւն չունէին դէպ' իրեն, դժւար թէ աւելի բարեկեցիկ դրութիւն ունեցողի ուշադրութեան արժանանար: Նա շատ լաւ ըմբռնել էր, թէ մարդ ասածն այնպիսի արարած է, որ թէկուզ ամենասոսկալի վիճակն էլ ապրի, ապա բախտի բերմամբ ազատւէ դրանից, նա շուտով ամեն ինչ կմոռանայ, իր նախկին դրութեան մէջ եղածներին այլևս չի խղճայ կամ ամենապակասը անտարբերութեան կմատնէ: Նրա գլխովն անցնում էին այդ չարատանջ մտքերը, բայց և դրանց կողքին ցցւել էր մի ուրիշը — վէճը. չպիտի թոյլ տասնւաստանալու այն չափ, որ մարդկանց խղճահարութեան, նրանց ողորմածութեանը ենթարկւելու անհրաժեշտութիւնն զգաս. նա լաւ հասկանում էր, որ եթէ անգամ ողորմութիւն ընդունէր, դրանով իր դրութիւնը չէր փոխւելու,

իսկ ինքը դրա գէմ կորցնելու էր իր հոգու վեհութեան և էութեան մեծագոյն մասը և հաւասարւելու էր բոլորովին փողոցն ընկած ու անպէտքացած թշւառականին։ Եւ նա ուզեց բարձրանալ տեղից, սակայն ցուրտն այնպէս էր անշարժացրել նրա մկանները—ձեռն ու ոտը, որ նա վայր ընկաւ, աւելի շուտ գլորւեց կողքին։ Պահապանը օգնեց, վեր բարձրացրեց նրան, այն պատւական հագուստի մէջ դողացող թշւառականին և հրամայեց հեռանալ։ Անծանօթը մեծ ուժով բարձրացնում էր ոտները, որպէս երկերկու փթանոց ծանրութիւն ու այնպէս գետին խփելով և հազիւ պահպանելով իր մարմնի հաւասարակշռութիւնը՝ կամաց կամաց հեռանում էր հարուստ քաղաքի լայն ու անհիւրընկալ փողից։

IV

Գարուն էր։ Զարթնել էր բնութիւնը. մարդկանց թմրած ոգիներն էին զարթնել։ Ամեն ինչ հոգեզմայլ գեղեցկութեամբ արբած, որպէս ծաղկոցի ցերեկւայ յափրած ծաղիկներ, ինքնամուացման ենթարկւածի քունն էր քաշում։ Նոր զարդարւած ծառերի տերեներն այլև չէին սվավում. նրանք դադար առած հանգստանում էին գարնան գեղեցիկ ու գրաւիչ երեկոյին։ Նըրանք չէին սվավում, որովհետեւ գարնանային երեկոյեան մեղմ զեփիւն այդ օրը, չարաճճի երեխայի երկար ու յոգնեցուցիչ խաղերից յետոյ, իր թմրած հանգիստն էր քաշում խորանտառների, ծաղկաբուրաւէտ դաշտերի և անհուն ու կապուտակ ծովերի խորքերում, որպէս սիրահար երկու զոյգերի ինքնամուաց հանգիստն իրար գրկերում։ Երգող թռչունների հոգեզմայլ ծլւցը, դայլայլն ու ճախրոցները չէին լուռում. նրանք էլ հարսանեկան գեղեցկուհիների նման, անբաւ պար ու երգերից յետոյ պահ էին մտել, որ նորէն, նոր աշխուժով ու եռանդով հնչեցնեն օդը, խօսեցնեն ծառն ու ծաղիկը և շար-

ժեն մարգկանց սիրտն ու հոգին։ Նրանք, ասես
խոհեմ ու զգոյշ, չէին ցանկանում իրենց շար-
ժումներով ու չարաձմի ճախրոցներով խանգա-
րել բնութեան մատն ու վրձինը, որ այնպէս
յափշտակւած նկարազարդում է ու լուսանկա-
րում ամեն ինչ և բոլորը, այնպէս նրբօրէն ու
գեղեցիկ, որ միայն իրեն է յատուկ։ Եւ սոխակն
իր քնքուշ ու սիրատենչ կուրծքը վարդի կար-
մրաթուշ կրծքին փարած՝ մնացել էր լուռ. սպի-
տակ կարապն իր խորհրդաւոր հայեացքով հան-
գիստ ու անթարթ պարզ ու վճիտ լճի խորունկ
ու կապուտակ աչքերի մէջ նայելիս էր մնացել։
Աներես ձնձուկները միայն հանգիստ չէին ա-
ռել. Նրանք, սովորականին պէս շարունակում
էին ճախրել ու ծլվալ ճանապարհների այս ու
այն կողմերի ծառերի, թփերի ու տերեների մէջ։

Օրւայ այդ պահին, քաղաքի հեռու այդինե-
րից մէկի խուլ անկիւնում, խիտ ծառերի տակ
նստոտած զրոյց էին անում մի քանի հոգի։ Այ-
դին գտնուում էր խճուղու և յորդառատ ու
սրնթաց գետակի մէջ տեղում։ Նա բարակ ու
երկարաւուն տարածւում էր հեռու գետի ու
ճամփի երկարութեամբ։ Ծառերի նօսր տնկւած-
քը չէր խանգաքում նրանց արանքից երթեւկող
ճամփորդներին ու գետակի հոսանքին նայել։
Զրուցաւորներից երկուսը մեզ յայտնի Մարգա-
րիան ու Վարդգէսն էին։ Նրանք սկզբում միւս-
ների հետ ասում, խօսում, ծիծաղում և հանաք-

ներ էին անում, բայց յետոյ վեր կացան; Քիչ
հեռացան ու աեղաւորւեցին հաստարմատ կաղնի
ծառի տակ. թաւշեայ բազմերանգ կանաչի վրայ
փոեցին Վարդգէսի վերաբկուն, նստեցին նրա
վրայ կողք կողքի իրանց հանգիստը վայելելու։
Մնացած չորս հոգուց մէկը կին էր, Մարգարտի
ընկերուհին։ Նրան անւանում էին Աստղիկ և
պատմական Աղտղիկի գեղեցկութիւնն ունէր նա-
Ռինչ, ոչինչ չէր պակասում նրան. ի բնէ սի-
րահար լինելով գեղեցկութեան ու պերճանքների՝
հագել էր շատ թանկագին ու նուրբ կտորներից
շորեր և զարդարւել ոսկեայ ու աղամանդեայ
զարդարանքներով։ Մի բան միայն պակասում
էր նրան՝ անդադրում պտրումները, որ գիշեր
ցերեկ տանջում էր նրան. դա մի շատ գեղե-
ցիկ վեսացու գտնելն էր։ Այդ նրան շուտ չէր
յաջողուում։ Իւրաքանչիւր նոր ծանօթի մէջ նա
ինչոր նոր առաւելութիւններ էր գտնում և դրա
համար էլ՝ աչքաթող անում նախկին ծանօթնե-
րին, որոնց մէջ, ասես, նոր միայն ինչոր թե-
րութիւններ էր գտնում։ Թեթև դատողութեան
տէր աղջիկ էր նա, ապրում էր զգացմունքնե-
րով։ Իւրաքանչիւր երիտասարդի պատահելիս ու
ծանօթանալիս՝ իր մէջ դէպի նա ինչ որ նոր,
անհասկանալի մօտիկութիւն էր զգում։ Այս-
պէս, նա ամեն մէկի հետ սիրահարւած, ամուս-
նանալու խօսք տւած և սակայն բոլորին էլ մէր-
ժած ու թափառող մտորումներով աղջիկ էր։

Հարուստ ընտանիքից լինելով՝ նա ոչինչ չէր խնայում իր գւարձութիւնների ու հաճոյքի համար, պարծենում էր իր սիրունութեամբ և ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում այն բոլոր խօսակցութիւնների վրայ, որոնք իր շուրջն էին պտտում։ Տանը երկար նա չէր կարողանում նստել, սպանիչ ձանձրոյթը իսկոյն նրան դուրս էր բերում փողոց, ուր նա գտնում էր ծանօթ ընկեր, և շրջագայելով մինչև կէս գիշեր, օր էր անցկանցնում։ Չարաճճի ու գւարձացող բնաւորութիւն ունէր նա, շատ անհամբեր էր, լուրջ խօսակցութիւնների ու վիճաբանութիւնների վըրայ երկար չէր կարող կանգ առնել և նոյն իսկ լսել. այդպիսի դէպքում մարդիկ նրան ձանձրալի էին թւում, և նա խուսափում էր նին ծանօթներից ու որոնում նոր ծանօթներ։ Այսօր Աստղիկը շատ ուրախ էր, նա նոր ծանօթներ էր ձանկել, դրանք նրան լաւ, շատ լաւ էին երեսում, նրանք էլ նրա պէս սրախօս ու գւարձացող էին։ Այսօր առաւօտեան, երբ նա դուրս էր եկել զբօննելու, մենակ էր. քաղաքային այգում նա պատահել էր Մարգարտին ու Վարդգէսին, որոնց հետ զբօնում էին այս նոր ծանօթ Սօսը, Ռուբէնն ու Հրանտը Աստղիկին մէջ առած միանգամայն տարւել էին իրանց քէֆով, այստեղ, կաղնի ծառի տակ, Մարգարտիտը կիսով չափ պառկել էր Վարդգէսի վերարկւի վրայ, յենւած ծառին, շարունակ շոյում էր վարդգէսի գանդրաներ գլուխը, որ նա զրել էր Մարգարտի կրծքին ու աչքերն անթարթ յառել նրա լուռ ու խօսուն աչքերին։

Մարգարիտը ժամանակ էր գտել, յարմար լուպէ՝ իր սիրտը միանգամից Վարդգէսի առաջ այնչափ ուրամադրութեան տէր մարդիկ էին, որչափ ինքը, այնքան գւարձասէր էին, որքան իր հոգին։ Նա ոչինչ չգիտէր այն մասին, որ ծանօթանալուց անմիջապէս յետոյ, Վարդգէսն իր բնաւորութեան մասին պատմած լինէր այս նոր ծանօթներին, որոնք այնքան ուրախ էին իր հետ, որքան աշխարհի երջանիկները։ Նա ցանկանում էր այդ մեծ հաճոյքը երկար, շատ երկար վայելել, այդ էր պատճառը, որ նա ձաշից քիչ առաջ առաջարկել էր բոլորին կաթնատուն մտնել կօֆէ խմելու։ Ոչ ոք չէր մերժել նրան, ամենքն էլ մեծ ուրախութեամբ ընդունել էին նրա առաջարկը։ Եւ նրանք կակաօ, եղածու ու զանազան համեղ քաղցրաւենիների նախաճաշով կշտացած՝ բոլորել էին այստեղ և իրանց գւարձախօս զըրյցներով ու սրախօսութիւններով ասում, խօսում, ծիծաղում և ժամանակ էին անցկացնում։ Մինչ նոր ծանօթ Սօսը, Ռուբէնն ու Հրանտը Աստղիկին մէջ առած միանգամայն տարւել էին իրանց քէֆով, այստեղ, կաղնի ծառի տակ, Մարգարիտը կիսով չափ պառկել էր Վարդգէսի վերարկւի վրայ, յենւած ծառին, շարունակ շոյում էր վարդգէսի գանգրաներ գլուխը, որ նա զրել էր Մարգարտի կրծքին ու աչքերն անթարթ յառել նրա լուռ ու խօսուն աչքերին։

Մարգարիտը ժամանակ էր գտել, յարմար լուպէ՝ իր սիրտը միանգամից Վարդգէսի առաջ

բաց անելու. Նա սրաի կոկիծով պատմում էր, ինչպէս ծանօթացաւ իդիալիստ ձևցող Կոստիայի հետ և ինչ հետեանք ունեցաւ այդ ծանօթութիւնը:

Մենք, ասում էր նա, դեռ փոքր ժամանակներից. որպէս զրացի հարուստների զաւակներ՝ մեր ամբողջ կեանքը միասին էինք անցկացնում, միասին միևնոյն դպրոցում սովորել խաղացել ու մտերմացել այնպէս, որ երբէք մեզնից մէկն ու մէկը մենակ տանից դպրոց և դպրոցից տուն չէր գնայ գայ: Քոյր և եղբօր նման էինք: Մէկն ու մէկիս մի փոքր երկար բացակայութիւնը խելագարի պէս ձանձրալի էր դառնում միւսի համար, այնպէս էինք նստել մենք միմեանց սրտերում: Ինչ և ունենայինք մենք՝ ես կամ նա, խտրութիւն չէր դրում, նա հստասարապէս երկուսիս էր պատկանում: Ճիշտ է, թէև նա կապրիզնի ու յամառ տղայ էր, բայց դէպի ինձ նա այդ յատկութիւնն երբէք, երբէք չէր ցոյց տալիս, և մենք սիրում էինք միմեանց, որպէս սիրոյ և անմեղութեան հրեշտակներ: Տասն և երկու տարեկան հասակում մենք աւարտեցինք միգասեան դպրոցն ու բաժնւեցինք միմեանցից. նա ուրիշ քաղաք գնաց սովորելու, իսկ ես՝ ուրիշ: Եւ այդպէս մենք ութ տարի շարունակ իրար չտեսանք ու մոռացանք միմեանց: Մեծացել էինք արդէն, խելացանք հաս դարձել, ամեն ինչի քննադատական հայեաց-

քով էինք վերաբերում ու այդ ժամանակ մենք հանդիպեցինք իրար Մ. քաղաքում, Մենք միմեանց հաղիւ կարողացանք ճանաչել, այնքան էինք փոխւել: Երազի նման հետզհետէ մեզանից իւրաքանչիւրի մէջ զարթնում էր միմեանց հետ անցկացրած երջանիկ ժամերը, քաղցը ընկերութիւնը: Այս անգամ արդէն իմ վերաբերմունքը դէպի նա շատ պարզ էր, անկեղծ, որչափ ներում է տարբեր սեռերի ընկերութիւնը, և ես նոյն էի բոլոր ծանօթների ու ընկերների վերաբերմամբ: Իմ դէպի նա ունեցած յարգանքս՝ նրա աչքում այլ բացատրութիւններ էին գըտնում, ինչպէս սովոր են մարդիկ՝ իրենց արշինվուրիշին չափելու: Նա մօտենում էր ինձ, մօտենում ամեն ուժով, հոգու ամբողջ թափով. որոնում էր իմ սիրած իդէալները, նրանց առաջ խոնարհուում, պատրաստ էր, որպէս թիթեռ՝ կրակին զոհ գնալու, անձնատուր լինելու ինձ: Եւ մենք մօտիկացանք, սղմւեցինք, մեր փոխադարձ յարգանքները սահմանից դուրս եկան. մենք սիրեցինք միմեանց, բայց այս անգամ՝ սեռերի սիրով: Ասւած է. «Ճարդիկ իրենց էութեամբ դժւար ճանաչելի են. մինչեւ գործ չունենաս նըրանց հետ, չես կարող ճանաչել». և ես գործ ունեցայ կոստիայի հետ ու ճանաչեցի. ճանաչեցի ու զզւեցի, զզւեցի և հեռացայ նրանից, նախօրօք ազատելով իմ հոգու և մարմնի մաքրութիւնը, թէ չէ, պիտի խաբւէի, խար-

ւէի ու փողոց շպրտւէի, որպէս մի անպէտք ո փշացած կեղտաշոր: Իդէալիստ ձևացող ուսանող կոստիայի մէջ աստիճանաբար բացւում էր քողարկւած հոգին: Նա իր եսից դուրս ուրիշ ոչինչ չէր ուզում հասկանալ, ցոյց էր տալիս իր տիրական յատկութիւնները: Իմ հոգու մաքրութիւնը ոչնչանում էր նրա առաջ, ես լոկ կին է նրա աչքում, ուրիշ ոչինչ: Նա իր հաճոյքն է որոնում իմ մէջ, և ես զգում էի, որ նրա ապագայ ստրուկ կինն էի լինելու: Միայն իմ վերաբերմամբ չէր, որ այդ յատկութիւններն էի նրկատում, խեղճերի դրութիւնն էլ նրա աչքում արժէք չունէր: Ինձ համար այժմ միայն պարզ ւում էր, որ նա հարազատ զաւակն էր իր ծնող ների — նախնիքների: Ժառանգական օրէնքը յատկութիւնները կրթութեամբ արմատախիլ չե՞ն արւում. և նա իր վաճառական ծնողների խըստասիրտ հոգին ունէր, լոկ սեպհական շահերի ու հաճոյքների կուռ արձանն էր, միայն քիչ յղկւակ-կոկւած, ճարպիկ հնարագիտութիւններով: Եւ ես անդարձ հեռացայ նրանից...

Մարգարիտը պատմել էր այս բոլորը, պատմել ծանր յիշողութեամբ, ասես, դրանով նա Վարդգէսի ներողամտութիւնն էր խնդրում, որ իր անդրանիկ սէրը կապած է եղել մի անհամապատասխան էութիւն ունեցող մարդու հետ, բայց հեռացել նրանից բոլորովին մաքուր ու միանգամից անձնատուր եղել Վարդգէսին: Նա

գեռ առաջին ճանապարհորդութեան ու ծանօթութեան ժամանակ Վարդգէսի հայեացքների ու հոգու մէջ իր համանման էութեան պատկերն էր գտել, լուռ յարգանք տածել դէպի նա, իսկ այժմ ուրախ էր, շատ ուրախ, որ տարիներ յետոյ նրա կեանքի հետ էր կապում իր կեանքը:

Քիչ ուրախ չէր նաև Վարդգէսը: Նա իրեն անսահման մխթարւած էր զգում, որ իր կեանքը կապում էր մի էակի հետ, որի հրեշտականման քնքուշ հոգին, մաքուր անմեղութիւնը, ազնիւ զգացմունքներն ու բարի սիրութեացնելու ու մեղմացնելու էին սրտում ամբարւած ու նստած հազար տեսակի դառնութիւններ: Այժմ հերթը նրանն էր. և նա իր կենսագրականից պատմում էր նման մի ցաւալի պատկեր, որ մինչև այժմ իր կեանքի դառնութեան բաժակն էր դարձել, իսկ հիմա փրկութիւն էր գտնում Մարգարտի գրկում:

— Ես, պատմում էր Վարդգէսը տիսուր ձայնով, պատահմամբ ծանօթացայ մի աղջկայ հետ, որ ճիշտ և ճիշտ Աստղիկի հոգին, կարողութիւնն ու բնաւորութիւնն ունէր, իր մի ժամանակ հաճոյքի համար նա թէ իմ և թէ իր հոգին կծախէր: Թեթև էր նա, որպէս հողմատարած չորացած տերեւ. հեռու էր նա ինձնից, որպէս անդունդով բաժանւած երկու լեռները. իմ մէջ աստիճանաբար աճում էր սառնութիւն դէպի նա: Իմ ոչ մի խորհուրդը նրա համար արժէք

ու նշանակութիւն չունէր, նա շարունակում էր իւրը. թեթևառիկ ու կասկածելի բարոյականութեան տէր աղջիկ էր: Ես կորած էի: Վերջին զգաստացնող առաջարկն արի նրան, նա նոյն էր և նոյնն էլ մնաց. և ես թողեցի ու ընդմիշտ հեռացայ նրանից, այնպէս՝ ինչպէս դու, Մարդարիտ: Նրա հարուստ ու դիրքաւոր ծնողներն ամեն տեսակի անմաքուր ճանապարհներով իմ դէմ ծառացան, խախտեցին ու վնասեցին իմ հասարական կայուն դիրքը: Ոչ մի սրբութիւն չունի քէնը, մանաւանդ հարուստի, կարող մարդկանց մօտ. նրանք ուզած ու ծածուկ միջոցներով իրենց նպատակին հասան: Ես հոչակւեցի քաղաքականապէս անբարեյոյս և արտաքսւեցի հայրենիքիս սահմաններից երկար ու ձիգ տարիներով: Ես երկար ու երկար տառապելու էի տանջանքների բեռը շալակած, եթէ նորէն քեզ չհանդիպէի, իմ անդին, իմ սիրելի Մարդարիտ: Այժմ ինչպէս տեմնում ես, մենք միասին ենք, միասին էլ բաժանելու ենք մեր դառնութիւններն ու քաղցրութիւնները:

Վարդպէսն այսպէս էր վերջացրելիր ասելիքը. այժմ նա Մարդարտի գրկումն էր, բացել էին իրար միմեանց սրտերը և խօսում էին լուս: Նրանք լաւ կշռել, չափել էին միմեանց հոգեկան կարողութիւնները, գտել էին իրար մէջ յարգանք, որն աստիճանաբար վառւելով սիրոյ խարոյի էր կազմել, և այժմ նրանք տաքանում

էին այդ ներքին խարոյիկից: Նրանք լուսու էին, սակայն նրանց իրար յառած անթարթ աչքերի մէջ խօսուն լեզուն էր վազում: Երկուսի սրտերի մուրճի պէս հարւածներն այնպէս զգալի ու լսելի էին միմեանց և այնպէս միաժամանակ զարկերով, որ նրանք անշարժ շղթայւած էին, որպէս մինչև անզգայութիւնը յարբած մարդիկ: Երբեմն երբեմն Մարդարիտն իր աջ ձեռով շոյում էր Վարդպէսի գլուխը, մօտեցնում էր իր հրաշունչ դէմքը Վարդպէսի դէմքին ու սիրատենչ վարդագոյն շրթունքները հպում Վարդպէսի շրթունքներին. իսկ Վարդպէսը, որ իր աջ ափում ըռնած ունէր Մարդարտի ձախ ձեռքը, իսկ ձախ ձեռքով գրկել նրա հրեշտակային ձկուն երանը՝ գրկել էր Մարդարիտն: Եւ այսպէս ամուր սղմւած իրար կրծքին՝ երջանկացնող, քաղցը ու կուշտ-կուշտ համբոյըներ էին քաղում միմեանց շրթունքներից:

Նրանք իրանց անհամնում երջանիկ ըոպէներն էին անցկացնում: Յանկարծ Մարդարտի դէմքը՝ նրա ջինջ հայեացքը մթնեց, ինչ որ ալեկոծող մաքերի սարսուռ անցաւ նրա դէմքով. նա նայում էր առաջից հոսող գետակին և րոպէ առ րոպէ անհանգատանում էր աւելի ու աւելի: Մարդարտի հայեացքի րոպէական փոփոխութիւնը շփոթեց և Վարդպէսին, որն այնպէս հարցական հայեացքով ուղղւեց ու նայեց այն կողմը, ուր Մարդարիտն իր հայեացքն էր սկեռել:

Այստեղ լճացած ու կանգնած գետակի խորունկ հոսանքի ափին կիսամերկ կանգնած էր մի անձանօթ երիտասարդ ու խաղում էր գետակի ալիքների հետ։ Նրա հաւաքած աւազաքարերը մէկը միւսի յետևից գետակի մէջ էին թափւում։ հանդարտ ջրի երեսին մեծ ու պստիկ շրջան կազմող ալիքներն իրար յետևից հետ հե վազում էին և մեռնող հոգու ողբը հաղորդում ցամաքի ափին։ Նետւած խիճերն, այնպէս հանդարտ, որպէս երազում թռչող ոգիներն, իրար յետևից ցած էին իջնում գետակի յատակն ու յաւիտենական հանգիստ առնում, որ էլ մարդկային զգւելի ոտները չկոխկոտէին նրանց։ Անձանօթն, երեխ, լողանալուց առաջ փորձեր էր անում, ուղում էր իմանալ գետակը խորն է, թէ ծանծաղուտ, վտանգաւոր է, թէ անվտանգ, բայց ջուրը գեռ շատ սառն էր, լողանալու ժամանակը չէր։ Ահա կիսամերկ մարդը կռացաւ, մի մեծ քար բարձրացրեց գետնից։ Նա թոկով կապւած էր, նա թոկի մի ծայրը օղակ արած՝ զցեց վիզը, խաչակնքեց երեսը մի քանի անգամ և... Մարդարիսն ու Վարդգէսը դէպ անձանօթ կիսամերկն էին վազում։ սոսկալի երևոյթի պատկերն էր նրանց առաջ։

— Մնաս բարե, աշխարհի... ողբացող ձայնը ալիքանման տատանումներով ճեղքեց օդը...

Շը՛րը՛, լսեց գետակի երեսին։
— Օ՛գնութիւն, խեղդւեց, ճիչ արձակեց

Մարդարիտը և ուշագնաց վայր ընկաւ դեռ ափին չհասած։

Վազէվազ վրայ հասան Ռուբէն ու Հրանտը։ Շը՛րը՛, շը՛րը՛, լսեցին նորէն ջրի երեսին ու Հրանտն ու Ռուբէնը սուզւեցին սրբնթաց գետակի այն լճացած ու հանգարտ հունը։

Գետակի ափում դարսւած էին խեղդւողի շորերը, նրանց վրայ մի նամակ էր դրւած։ Պատահողին հասցէսով։ Վարդգէսը վերցրեց նամակը, բացեց և սկսեց կարդալ։ Նրա մէջ դրւած էր. — «Յարգելի այցելու, ես մեռնում եմ և իմ մահւան մէջ ոչ ոք մեղաւոր չէ. մեռնելու պատճառն անտանելի կացութիւնն է, որից վերջ ի վերջոյ բաժանւում եմ։ Շորերս չեմ տանում հետա, տւէք այն մի աղքատի, դրանով որոշ մեղմութիւն կպատճառէք էս անիրաւ աշխարհում նրա դառն օրերին. մնաք բարե...»

Մարդարիսն արդէն ուշըի էին բերել Սօսն ու Աստղիկը. նա այժմ Վարդգէսի կողքին կանգնած՝ կարդում էր նամակը։ Նամակի ընթերցումից յետոյ բոլորն էլ ակնապիշ ու լուռ, մտամոլոր ու սրտատրով գետակի այն տեղն էին նայում, ուր զցել էին իրենց Ռուբէն ու Հրանտը. Ամեն անգամ, երբ դիակը որոնող Ռուբէնն ու Հրանտը ջրի երեսն էին բարձրանում շունչ բաշելու համար, ախ էր թռնում ափում կանգնածների սրտից. «Կորաւ», ասում էին նրանք, Ռուբէնի ու Հրանտի ջրի երես դատարկածեն

բարձրանալը վերագրելով այն բանին, թէ մարմինը չէ գտնւում: Վերջին անգամ փրկող ու ազատող Ռուբէնն ու Հրանտը ուշացան ջրի տակ այդ ուշանալով սարսափելի անհանգստութիւն պատճառեցին գետափում կանգնածներին, բայց և քիչ յետոյ մեծ ճիգերով հազիւ հազիւ զլուք ները դուրս հանեցին ջրից, ծանր շնչեցին, բերանները լցւած ջուրը դուրս փչեցին: Նրանք, սաեւ, կորցրել էին իրանց ուժերը, և վտանգ մէջ էին. Նրանք թոյլ, օրհասական ճիգով դէմ ափ էին լողում իրենց գոնէ ազատելու համար:

— Զկայ, հարցրեց սարսափած ու անհամբեր սպասող Մարգարիտը:

— Բերում ենք, — պատսխանեց Ռուբէնը՝ Նրանք ափ դուրս բերին արդէն զիակ դարձած անծանօթի մարմինը: Նա դեռ տաք էր, սիրաբարախում էր: Անմիջապէս քարից կապած թուկի օղակը ազատեցին նրա վզից: Օգնութիւնն ոխնամքը փրկարար դեղեր են և ահա խեղդւած ձեռ ու ոտերից չորս ուժեղ տղամարդիկ բռնած որպէս հնոցի, յետ ու առաջ էին տանում բերում երեսն ի վայր ու գլխի վայր ցած կախում: Ամեն անգամ այս գործողութիւնից յետոյ խեղդւածի քիթ ու բերանից ջուրը վխտալէն դուր էր թափւում...

Կէս ժամ չանցած, Գուրգէնն, այսպէս անւանեց իրան խեղդւողը, ասում, խօսում ու ակամայից պատասխաններ էր տալիս նրանց հար-

ցերին: Ինչպէս Մարգարիտն, այնպէս և ամենքը խղճի անդորութիւն էին զգում, նրանց սըրտերից վայր էր ընկել լեռան նման ձնշող ցաւը: Անկեղծ բարիքը, միշտ հոգու հանգիստ է բերում մարդուն, և նրանք հանգիստ էին այժմ: Վարդգէնը խորասուզւել էր մտքերի ծովի մէջ, իսկ Աստղիկը ապուշ կտրած սոսկալի դէպքից՝ նայում էր լուռ ու զարմացած, թէ միթէ մարդիրան կխեղդի...

—Պարոնի դէմքը ծանօթ է թւում, նկատեց Մարգարիտը:

—Թ. քաղաքումն ենք ծանօթացել, լաւ յիշմէր, պատասխանեց Հրանտը:

—Մ. այգում Տ-ի միջոցով ծանօթացանք, մէջ մտաւ Ռուբէնը:

—Ո՞րչափ փոխւած է երեսում, ասաց Սօսր: Գուրգէնը նոյնպէս նկատել էր, որ դրանք ծանօթ դէմքեր էին. այդ բանը նրա մէջ ոչ մի փոփոխութիւն չէր յառաջացնում: Նրա դէմքի վրայ նկատելի էր տանջող մտքերի, ալեկոծւող հոգու դաժան դրօշմը: Իրեն փրկող-ազատող ծանօթ խմբի պարզ հարցասիրութիւնը նրան ամենակն չէր հետաքրքրում. Նա շատ լաւ գիտէր, որ ծանօթի, թէ անծանօթի գերը մի քանի պարզ և ցաւակցական նախադասութիւններից ու խօսքերից դէնը չէր անցնելու, այդ էր սովորեցրել նրան կեանքը. և նա լուռ ու հանգիստ ծա-

նօթներին էք նայում։ Գուրգէնի այդ սպանին լոռութիւնը Մարգարիտը խանգարեց։

—Այժմ ի՞նչպէս էք զգում ձեղ, —հարցրեց նա Գուրգէնին։

—Անքան լաւ, որ որևէ մէկիդ դիմելու ոչ պահանջ ունիմ և ոչ խնդիր, —պատասխանեց Գուրգէնը։

—Խնդրեմ, առանց քաշւելու ասէք և պարզ լինէք կրկնեց նա։

—Պարզ էի, բայց այդ դրութիւնը ինձ կորուստ տարաւ, էլ չեմ ուզում պարզ լինել։

—Միթէ դուք մեզնից վախենում էք, ասացէք ճիշտը, մենք որևէ է բանով կարող ենք պէտք դալ ձեղ. —ստիպում էք Մարգարիտը։

—Յարգելի օրիորդ, ծանօթ, թէ անծանօթ այդ նոյն հարցերն են առաջարկել ինձ և իմ նման շատ շատերին. ես դէպի մարդիկ հաւատ չունիմ այլևս, չնայած նրանց մէջ լաւերն էլ կան. թողէք հանգիստ, —խնդրեց Գուրգէնը։

—Խնդրում եմ մեզ ընդունէք քոյր և եղօր տեղ և չնեղանաք։ Ի՞նչն էք պատճառը, ինչու էիք դուք ինքնասպանութիւն գործում, —թախանձելով, որպէս սրտացաւ բարեկամ, պարտաւորեցնում էք Մարգարիտը։

—Է՞հ, այնպէս, միանգամից կը պլծնէի, —պատասխանեց նա կտրուկ։

—Այսինքն։

—Սովը, դուք ճանաչում էք նրան։
—Բայց չէ՞ որ դրա առաջը կարելի է առնել, մէջ մտաւ Ռուբէնը։
—Ի՞նչնիվ։

Աշխատանքով։
—Ո՞րտեղ։
—Այս աշխարհում, ամեն տեղ։
—Ճոյց տւէք, ես չգիտեմ տեղը։
—Որոնեցէք՝ կգտնէք, մարդիկ ցոյց կտան ձեզ։

—Հապա երկու տարի շարունակ որոնեցի ու չգտայ, այսինքն գտայ շարունակ, բայց մարդիկ աշխատանք չտւեցին։

—Անկարելի բան է, ինչու աշխատանք չպիտի տային ձեղ, եթէ աշխատաւորի կարիք ունենային։

—Ա՞խ այդ «ինչուն». կամ ինձ չէին ճանաչում, կամ չէին վստահանում և կամ յարմար չէին գտնում։

—Մարդիկ մէջ գցէիք, միջնորդ-ծանօթներով կարելի էք յաջողեցնել։

—Մարդիկ, մարդիկ. ճիշտ է, այս աշխարհը միջնորդների և պլոտեկցիաների աշխարհ է, բայց այդ մեծ մասով տեղի է ունենում ինամիների —բարեկամների համար. անծանօթների և հասարակ ծանօթների համար նա կամ շատ քիչ տեղ ունի, կամ ամենելին տեղ չունի։ Քիչ բացառութեամբ մարդիկ միջնորդում կամ

որևէ աւելորդ հոգատարութիւնն են յանձն առնում այն ժամանակ, երբ նրանք սեպհական շահունին, ուրիշ, հակառակ զէպերում մարդու դիրախտ դրութիւնը նրանք ցաւակցական ու լոկի խօսքերով են թաղում: Տաքացած ու սրտի հուժկու զայրոյթով էր արտայայտում Գուրգէնը Աստիճանաբար բարձրացնում էր ձայնը, բայց յետոյ զգալով, որ դրանով միայն իր մաղձն չարժում՝ լոեց:

—Ախար, պլ. Գուրգէն, նկատեց Սօսը, այդ չափ խիստ նկարագիր ես չեմ գտնում կեանքում: Ամենքն էլ գործ են որոնում և գըտնում, ինչու ձեզ համար միայն եզակի ծանր դրութիւն պիտի ստեղծւէր. գուցէ գուք համեստ աշխատանք չէք սիրում կամ յարմարուում:

—Թերես ձեզ այդպէս թւի, կողմնակի մարդ կանց միշտ այդպէս է երկում. տւէք ինձ թէ կուզ ամենահասարակ աշխատանք, և ես ամենայն հաճոյքով կ'կատարեմ, միայն թէ դրանով կարելի լինէր ապրել և տուն ու ընտանիք պահել:

—Ուրեմն դուք և ընտանիք ունիք, հարց' բեց Հրանտը:

—Այդ գուցէ ձեզ համար նշանակութիւն չունենայ, սակայն նա մեռնում է սովից իմ այդքան երկար անգործութեան պատճառով:

—Իսկ դուք կարծում էիք, թէ ձեզ խեղդելով նրանց կազմատէիք սովից:

—Ոչ, իսկ դուք գիտէք, ի՞նչ ասել է մարմ

նական, հոգեկան և մտքի կատարեալ տանջանքը, կենդանի մեռնելը, սողալն ու ողորմութեան ձեռք մեկնելը, որով նոյնպէս չէի փրկելու կենդանի մեռնող ընտանիքը. կամ գուցէ գուք գերադասում էք սրանք, քան մեռնելը... է՞հ. ինչև է, հեռւից քննադատողի համար ամենինչ հեշտ է...

—Պարոն Գուրգէն, ձեզ համար հասկանալի պիտի լինի, որ կեանքը կոիւ է, հետեապէս նրա ձանփին յուսահատւելն ու անձնասպան լինելն ամենամեծ յիմարութիւնն է: Կեանքն ամեն մէկից պահանջում է խելացի, տոկուն ու ճարպիկ գործելակերպ, որպէսզի նա, այսպէս թէ այնպէս, իր առօրեայ պէտքերի բաւարար միջոցները գտնելով՝ ապրէ, որ անցկացնէ: Երբէք չի կարող պատահել, որ մարդու աննախանձ դրութիւնը միանգամից, յանկարծակի փոփոխութեամբ դէպի լաւը փոխւէ: Եթէ բացառիկ դէպերի պատահմունքները մի կողմ թողնենք, կտեսնենք, որ մարդու դրութիւնը լաւանում է միայն և միայն անընդհատ, անդուլ և չարքաշ աշխատանքով, զրկանքների թափով և համբերատար ոգուուժով, ուստի դիմանալ և համբերել է պէտք: Երբ մարդ աննպաստ հանգամանքների շնորհիւ յուսահատւում է և անձնասպանութեամբ վերջ տալիս իր կեանքին, հաւատացած եղէք, դրանով նա մաղաշափ շահ չի բերում իր ընտանիքի կենդանի մնացած անդամներին, ուստի դուք էլ չպիտի կորցնէք ձեր հոգու արիութիւնը, թէկուզ

ինչ վիճակում էլ գտնւելիս լինիք, ջանք գորդ դրէք ապրել և միջոցների հնարաւորին չափ առ բեցնել ձեզնից սպասելիք ունեցողներին:

—Պ. Հրանտ, լիապէս հասկանում եմ ձեզ դուք կեանքի կոիւն այլապէս էք հասկանում Դուք պիտի ընդունէք, որ ինձ պէս թոյլերն աւ խարհում գոյութիւն պահպանել չեն կարող, ու բեմն օր առաջ նրանց մահը ցաւալի չէ, քան աւելի վատթար կեանքով վերջ ունենար, աւ խարհն ուժեղներինն է:

—Միթէ դուք այդչափ թոյլ էք զգում ձեզ —հարցրեց Ռուբէնը:

—Ոչ, սխալ չպիտի հասկանալ: Աշխարհում մարդիկ բոլորն էլ այսպէս թէ այնպէս իրար հե կապւած են, իրարից՝ կախւած. շփումների գործողութիւնների այս կամ այն ընթացքը զ նազան մարդկանց համար բերում է լաւ կա վատ հետեւանք, սակայն մէջ տեղ առւժողը մի՛ էլ բարեխիղմ ու արդարամիտ միամիտներն են Մարդիկ գաղաններ են և նրանց մօտ թշւառն ըի դրութիւնը ծաղրելի է ու ծիծաղելի: Նրան ստեղծել են և ստեղծում են սոսկալի օրէնքներ ու կարգեր, իսկ դրանց զոհ են գնում իմ նը մանները: Թշւառ դրութեան մէջ որոնում է փոքրիկ մխիթարանք, սփոփանք, և շարու նակ ձեր առաջն է ցցւում անգթութիւնը. մարդ կանց մօտ վնասում էք խիղճ՝ նա մեռած է յոյս ու հաւատ էք որոնում՝ երազ է, բարոյ

կան պարտքի և օգնութիւն ցոյց տալու զգացումներ՝ չկան. միայն մի բան կայ—ուժն իրաւունք է և նրա հանդէպ մենք ենք թրպրտում: Այսպիսի պայմաններում իմ նմանների կեանքը մեծ թշւառութիւն է նախ իրենց համար և ապա այլասեռող հասարակութեան համար: Զէ որ նման թշւառ պայմաններում ես և իմ նմանները չկարողանալով կեանքի տարրական պէտքերը հասցնել իրենց ընտանիքին, զաւակներին՝ չեն կարողանում մնուցանել ու բարեկրթել նըրանց այնպէս, որ դրանցից գողերի, սրիկանների, անբարոյականների ու անսասնական բնագդների յակումներով մարդիկ չգուրս գան ու խտացնեն առանց այն էլ ապականւած աշխարհը: Դա ծանր բեռ է իմ կրծքին, դրանից եմ խորշում և աշխատում օր առաջ ազատել այդ միալար տանջանքից: Է՞ն, ի՞նչ էք ուզում պարոնայք, ապրել շարունակ գժոխային տանջանքով, միշտ քո նմանների ոտների տակ սողալով ու տրորւելով, որտեղ ոչ ոք չէ խնայում ու շարունակ, սոված, մերկ ու դողալէն... Է՞ն, վերջապէս, գուցէ և այդչափ թով չեմ, ինչպէս կարծում էք, հետեւապէս և շուտ մեռնելու արժանի, հանդիստ թողէք ինձ. շատ եմ յոգնել նման հարցերի մասին երկար-բարակ խորհելուց և դաժան իրականութեան հետ համեմատելուց:— Գուրգէնը կամաց-կամաց տաքանում էր և զայրանում: նրա սրտի մաղձն էին շարժել և նա արտայայտում

էր, որպէս ուժգին բողոք կեանքի և մարդկանց հիւսած կուռ անարդարութիւնների և անողոք հարւածների դէմ։ Նրան այնպէս էր թւում, թէ ներկայ խօսակիցներն էլ ծաղրում էին նրան, ինչպէս ամենքն էին ծաղրել և ծաղրում և նրա աչքում դրանք էլ թշնամիներ էին։ Գուրգէնի հոգեկան յուզումնալից ալեկոծումներն ամենից շուտ նկատել էր Մարգարիտը, որ աշխատելով փոխել խօսակցութիւնն ու հանգստացնել նրան հարցը մեղմաբար։

— Դուք այստեղ ծանօթներ կամ ընկերներ չունի՞ք։

— Ունիմ, բայց լաւ կլինէր չունենայի, պատախանեց Գուրգէնը, հասկանալով Մարգարիտի մտադրութիւնը։ Ծանօթներն ու ընկերներն այն ժամանակ են ծանօթ և ընկեր, երբ դիլք և փող ունիք, իսկ կարիքի ճանկերն ընկած դէպ քերում դրանք ոչ ծանօթ են և ոչ ընկեր։ Դեռ ձեզանից էլ խուսափում են—փախչում, որպէս փողոցներում սովից քոռացած և կմախքացած քաղցած շներից, որոնցից ոչ մի շահ չունին։ Հէ որ շները պէտք են, երբ մսոտ են ջանել, կենսունակ ու օգտակար։

— Է, լաւ, ինչո՞ւ էք եկել այստեղ և մատնւել այդ դրութեանը։

— Այնպէս, ինչպէս շատերն են եկել, այն տարբերութեամբ, որ ինձ դժբախտ կեանքի առ նիւն է շպրտել այստեղ և զրկել գործից։

— Երկում է, դուք այս աշխարհում ոչոքից գոհ չեք, - նկատեց Սուր։

— Այո, բայց դուք էլ երկի հասկացնել էք տալիս ինձ, թէ իմ կեանքը փրկեցիք, ուրեմն և շնորհապարտ եմ ձեզ, սակայն չարաչար սիսաւում էք, դրանով դուք մի քիչ աւելի երկարացրիք իմ անասելի տանջանքները։ Երկի սոսկալի ձմեռներին փողոցները պիտի շըջեմ ու լուսացնեմ, ինչպէս այժմ քաղաքի ծայրերն ու այգիներն եմ բնակարան դարձրել, որպէս անտէր, անտիրական, արտաքսւած շները, նորէն պիտի տեմնեմ մերայինների սովոր ու տանջանքը։

— միկտացնող դրութիւնը և կտոր կտոր փրթիք սիրտս ու ուղեղս, կամ խէնթացած փողոցները շըջեմ, որպէս ծաղրի առարկայ. Հէ որ նման պատկերներ սպասող և որոնող կուշտ և հոհուցող մարդկանց համար մենք գւարձալիք ենք միայն և ուրիշ ոչինչ։ Գուրգէնն անասելի կըսկիծով պատախանեց վերջին հարցին, նա տարել, զգացել էր նրա ահոելի ծանրութիւնը և դրա պատմութիւնը պատախան էր ներկայացնում անհոգ հարցասէրներին։ Նրա յիշողութիւնը, որպէս շանթեր, կրծում էին նրա հոգին. ձմեռւայ սարսափի, մահաշունչ գիշերին—Քըիստոսի ծննդեան հրաշափառ տօնին ինքն էր, որ զրկանքների ու ցրտի յօշոտող ձիրաններում չորացել էր, մինչդեռ սրանք, ով զիտէ, ինչպիսի երջանիկ ժամեր էին անցկացնում։ Նա զիտէր, 6

որ ամբողջ կեանքը թշւառների, խեղձերի համար ծաղը է, թունալից ծաղը, իսկ խօսքերը միխթարական խօսքերը՝ լոկ դառնութիւններ են առանց միխթարական դրական հետեանքի: Նու կոտրւած հոգով, թուլացած ու նւաղած ձայնց ցածրացրեց ու լոեց:

Պատահում են ժամեր, անցքեր — դէպքեր, երբ մարդ խօսակցութիւններից աւելի քիչ բան է հասկանում, քան դիմացինի հոգեկան դրութեան ճշգրիտ ու լուռ արտայայտութիւնից, աւելի շատ և շուտ է զգում ու ըմբռնում ճշմարտութիւններ, քան նրան խօսքերով կրացարէին: Եւ այսպէս ամենքն էին հասկացել Գուրգէնին ու նրա փոթորկալից հոգեկան դրութիւնը և չէին քաշում իրենց միխթարական — կոտրւած ոգին վերականգնելու խորհուրդներ տալու:

— Ինչու էք այդչափ վիճատւած խօսում, կեանքն երբէք այնքան դառը չէ, ինչպէս նկարագրում էք: Կեանքում ոչ մի բան անվերջ ու յարատե չէ, ամեն ինչ փոփոխում է: Զեր արիութիւնը — ոգին չպիտի կորցնէք ու յուսահատւէք: Կը գայ ժամանակ ձեզ էլ կը ժամանակ յաջողութիւնը, կլաւանայ ձեր դրութիւնը, այն ժամանակ՝ ձեր կրած բոլոր դառնութիւնների հանդէպ անպայման կզգաք կեանքի այնքան մեծ գրաւչութիւնն ու քաղցրութիւնը:

— Կեանքի քաղցրութիւնը, շատ լաւ. բայց ես երբէք չեմ ժխտում այն, սակայն երբ աղ

ւէսի նման քիթ ու մոռութս լիզելով միայն պիտի անցնեմ հասած ու հիւթալի վազերի տակից ու համը չտեսնեմ՝ ինձ համար քաղցր կեանք չէ լինելու դա:

Խօսակցութիւնը բաւական երկար տևեց: Գուրգէնի պատասխանները զուտ փորձերի հետևանքներից էին բղասում և համոզեցուցիչ էին, բայց թէ զրան անպայման անձնասպանութիւնը պիտի հետեւէր՝ ոչ ոքի հոգուն մօտ չէր և անհասկանալի. տանջանքի մէջ էլ համբերութեան տոկունութիւն է պէտք: Հարկաւոր էր սիրտ և ապա տեղ տալ Գուրգէնին, այդ միտքը բոլորի վկանը էր անցել. նրա գլխի քաօսային մտքերը պէտք էր ջոկել ու դուրս շպրտել անձնասպանութիւն գործելու միտքը: Մինչեւ այդ բոլոր պէն լուռ, նոյնպէս հալածական վարդգէսն եղաւ առաջինը, որ ձեռք մեկնելով նրան՝ ասաց.

— Գուրգէն ձեռքդ տուր ինձ, ներիր որ գուռվ եմ խօսում, այսրւհետև պիտի լինես մեզ հետ միասին, հաւասար ու մտերիմ ընկեր. Ինչպէս մենք ենք ապրում, այնպէս էլ դու կապրես, մինչեւ տեսնենք... Ես այս ասում եմ անկեղծօրէն, միայն խօսք տուր, որ մեզ հետ անբաժան ընկեր ես լինելու և երբէք մենակ որե է տեղ չես հեռանալու:

Համանման դրութեան մէջ եղածները, բարեկամներ են. և Գուրգէնը տւեց նրան իր ձեռքը: Նրանք վեր կացան ու շարժւեցին դէպի տուն:

մնաց թէ՝ այսպիսի գեղեցիկ երեկոյին։ Եւ մեր զրօնող խումբը խաղ ու երգով, ծիծաղ ու քըրքիջով, որպէս երջանկութեան անհոգ ողի, թըռթուալէն առւն էր վերադառնում։

Գարնանային ագահ արեգակը ծծել էր երկրի խոնաւութիւնը։ Խճուղու ճանապարհի տրորւած հողը փոշի էր դարձել, որ այնպէս վախկոտ, որպէս վայրենի նապաստակը, մարդկանց քայլերի իւրաքանչիւր փոխելու, գետին գնելու ժամանակ վեր էր թուչում ու մոլորւած և շփոթւած մժեղների պէս իրեն հանգիստն էր գըտնում, հաստում մարդկանց—երթեեկողների վրայ։ Զբունողները մինչև քաղաքի երկաթուղու կայրան համնելը փոշու հաստ շերտով էին ծածկւել։ Կայարաննում նրանք սրբւեցին—մաքրւեցին, լւացւեցին ու այնպէս մաքուր ու հանգիստ քաղաք էին վերադառնում։

Կայարանի հրապարակի ձախ կողմում մի խումբ բանտարկեալներ շրջապատւած էին սրամերկ զինւորների և քաղաքապահների երկտակ վաշտով։ Նրանք նոր էին տեղ հասել և այժմ աշակուրջ հսկողութեամբ քաղաքի բանտն էին տարւում, որտեղից նրանցից իւրաքանչիւրին ուղարկելու էին իրենց պատիժները քաշելու, յանցանքները քաւելու որոշւած տեղերը։ Բանտարկեալների գէմքերին կարդացւում էր նրանց հոգեկան դրութիւնը։ Բանտարկեալներից ոմանց խրոխտ դէմքն ու քայլւածքը, արի սիրտն ու

V

Արդէն ժամը եօթն էր։ Վերջալոյսի արևը ոսկեզօծել էր ծառերի կանաչ, սաղարթախիտ գագաթները։ Դաշտերի երեսը ծածկող մատղաւ ծաղկաւէտ կանաչի օրօրներն արևի հազար գոյնի ճառագայթների հետ միախառնւած՝ մեղմ ու ջինջ ծովի կապոյտ-կանաչաւուն ալիքներին էին նման։ Մեղմ զեփիւոն իր հովասուն հոսանքով սթափեցրել էր հանգիստն առած ծառն ու ծառդիկը, դիւղն ու թուչունը։ Խօսուն աղբերակներն ու քչքացող առուակներն ամենը ամենը լեզու էին առել և գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էին բնութեան վերջալոյսի գեղեցկութիւնը։ Հրաշալի էր գարնանային այդ երեկոն, ուրախ էր մարդկանց սիրտն ու հոգին, ուրախ էր և մեր ծանօթ զրօնող խումբը։ Գեղեցիկ օրւան գեղեցիկ տօնն էր այդ երեկոն։ Երբ մարդը հանգիստ է խղճով, բարիք է կատարել՝ իրեն երջանիկ է զգում, թէկուզ ամենավատ օրւայ մելամաղձ ու թղպած պահին, որ այնպէս խըստօրէն նստում է մարդու հոգու վրայ և փոխում նրա ամենալաւ տրամադրութիւնը, ուր

հոգին քշել—վանել էին նրանցից վհատութիւնն ու թուլութիւնը, հաստատ համոզւած լինելով, որ նրանք այսպէս թէ այնպէս իրենց պատիժը փակւած պատերի մէջ էին անցկացնելու, որ իրենց կատարած յանցանքների վարձատրութիւնն էր, քայլում էին հաստատուն քայլւածքով և այնպէս աղմկելով թնդացնում էին օգը իրենց ոտների շղթաների ողբացող շոխնդով։ Նրանք յանցանք գործելուց առաջ գիտակցել էին այդ կեանքը, և նրանց դէմքերին զղջման ոչ մի հետք չէր նկատւում. դիմացկուն էին նրանք և առողջ կային բանտարկեալներ, որոնք դողերոցքի թուլութեամբ, որպէս հիւանդներ, հւիճեւ հազիւ էին հետևում իրենց համանման կացութեան ենթակայ յաղթանդամ և ի բնէ առողջ ընկերակիցների ընթացքին։ Նրանց դէմքերին երեսում էին լքումի, յուսահատութեան նշաններ, և գեղսութիւնն ու դալկութիւնը իր կնիքն էր թողել նըրանց դէմքերին։ Նրանք կամ յանցանքը կատարելուց յետոյ զղջացածներ էին, կամ թուլակազմ, բանտարկին կեանքը տանելու անզօրներ։ Բանտարկեալների մէջ կային մի շարք մարդկեւ, որոնց խեղճացած դէմքերին դժգոհութեան, զայրոյթի և բողոքի առկայծող նշաններն էին երեսում։ Նրանք կամ անմեղ զոհեր էին, որ ժամանակին անկարող լինելով մարդկանց սուտ, զրպարտող և անարդար ցուցմունք ու վկայութիւն որոգայթներն իրանցից վանել—հեռացնել՝

ենթարկւել էին պատիժների, բանտարկին կեանքի, կամ անբաւական՝ որոշւած խիստ պատիժների դէմ։ Եւ դրանք, որպէս մարմնացած բողոքներ մարդկանց անարդարութիւնների դէմ, ճար անճար համակերպւել էին բանտարկեալի դրութեանը, գնում էին չկատարած յանցանքի, որոշւած պատիժը կրելու։ Նրանք դժգոյն էին, որպէս մարող ճրագը, թոյլ ու դեղին որպէս ծառից պոկւող աշնանային տերեկը։

Հիւանդներն ու հալ ու մաշ եղած ոսկրակալածներն, որպէս գերեզմանոց տարւող դիմկներ, բեռնատար սայլերի վրայ նստած գնում էին առջնից գնացող բանտարկեալների յետեկից։

Յետեկի բանտարկեալներից մէկը, որ ոտների շղթաներից աղատ էր, յանկարծ վերցրեց փափախը և բարեկց փողոցի մայթերի վրայով գնացող Մարդարտին։ Մարդարտը շփոթւեց ու շմեց, զոռ տւեց աչքերին և ուղեղին, սակայն ի զուր նա չէր կարողանում յիշել ու ճանաչել բարեկող բանտարկեալին, որի սրատես հայեացքից չէին խուսափել վարդգէսի և Մարդարտի ծանօթ դէմքերը։ Կրկնւեց զլիսարկի բարեկը. բանտարկեալի դէմքի ծանօթ թւալը նրա աղօտ յիշողութեան մէջ չճանաչւեց։ Նա չկարողացաւ իմանալ, թէ ովք էր բարեկողը, ստիպւած եղաւ վարդգէսի օգնութեանը դիմել։ Նա բոթելով վարդգէսին՝ նրա ուշադրութիւնը դարձրեց բարեկող բանտարկեալի վրայ։ Բարեկ եռապատկւեց։

Երեխ բանտարկեալը հասկացել էր, որ նրանք
միանգամից իրան չճանաչեցին:

Վարդպէսը նայեց, նայեց և յանկարծ յիշեց-ճանաչեց նրան. կէս ուրախ, բայց սարսա-
փով աչքերը լայն բացեց, մէկ էլ նայեց ու սըր-
տի ցաւով յետ նայեց, ինչ որ բան փափսաց
Մարգարտին: Նրանք բարեկցին բանտարկեալին
խղճալի, ցաւալի արտայայտութեամբ: Մարգա-
րտին իր հայեացքը չէր հեռացնում ծանօթ բան-
տարկեալի վրայից, նա ինչ որ խղճալի ու թըշ-
ւառ իրականութեան դառն կնիքն էր տեսնում
նրա վրայ, ակամայից ձեռները ուշիկուլը տա-
րաւ, ինչ որ բան տւեց Վարդպէսին և փափսա-
նրա ականջին: Նրանք մօտեցան բանտարկեալ-
ների կողքից գնացող պահնորդ սպային, խնդրե-
ցին նրան ընդունել հնգանոց թղթագրամը և յիշ-
ած բանտարկեալին տալ: Սպան ընդունեց
միայն բանտապետին յանձնելու պայմանով. այս-
պէս էր կարգը, բանտարկւածի ձեռքը փող չպի-
տի մնար. նա ծոցից հանեց ծոցատետըն ու մա-
տիար, նշանակեց այնտեղ բանտարկեալի անու-
նը, տրւած փողի քանակը և տւողների անունը:
Այս բոլորը նա կատարեց այնպէս, գնացած տե-
ղը: Աշխարհում բարի մարդիկ քիչ կան, այս-
մէկը — սպան դրութիւն մտնողներից — բարինե-
րիցն էր. նա մինչև անգամ թոյլ տւեց Մար-
գարտին ու Վարդպէսին հեռուից, գնալիս ծա-
նօթ բանտարկեալի հետ խօսել: Եւ նրանք բո-

լոր ընկերներով մինչև բանտի դուռն ուղեկցե-
ցին բանտարկեալներին: Վարդպէսն ու Մարգա-
րտը ծանօթ բանտարկեալի հետ խօսում էին
կցկառուր, հարցեր տալիս և պատասխաններ ստա-
նում նոյնպէս կցկառուր. շղթաների շըրըն ու
զըրընգը, ճանապարհից վազող սայլերի ու կառ-
քերի սալայատակների վրայ բարձրացրած դղըր-
դոցը, փողոցային աղմուկն ու աղաղակը և իրա-
րից հեռու լինելը խանգարում էին լաւ լսել
միմեանց:

Վարդպէսն այնուամենայնիւ կարողացել էր
նրա այդ գժեբախտ վիճակի համառօտ պատմու-
թիւնն իմանալ: Արտասովոր պատմութիւն չէր
նրա կեանքի նկարագիրը, նա հազարաւորներից
մէկն էր իր առանձին գոյնով ու բնոյթով:

Երբ բանտարկեալներին բանտ տարան,
Վարդպէսն ու Մարգարտը մնացած ընկերների
հետ գնաս ու մնաս բարեկի հրաժեշտը տալուց
ու բարի սպային շնորհակալութիւն յայտնելուց
յետոյ վերագարձան տուն: Ճանապարհին Վարդ-
պէսը պատմում էր ընկերներին, թէ ով էր բան-
տարկեալը և թէ ինչ սոսկալի իրականութեան
զոհ էր նա:

— Նա գիւղացի թորոսն էր, պատմում էր
Վարդպէսը, մենք նրա հետ ծանօթացանք երկու-
տարի առաջ, երբ ես ակամայ հեռանում էի այս
կողմերը — իմ նոր բնակատեղին, իսկ Մարգա-
րտին ու ուսանող կոատիան գնում էին իրենց

ուսումը շարունակելու, Գնացքի երրորդ կառքումն էինք տեղաւորւած մենք և մեզ հետ միասին գիւղացի այս Թորոսն իր երկու ընկերների հետ, որոնցից երկուսը տեղաւորւել էին մեր գլխավերեւում, իսկ երրորդը՝ մեր ոտների տակ—նստարանի ներքեւում։ Նրանք, ասես, գաղան շների յօշուող ոեխից էին ազատւել, այնպէս զգգուած շորերով էին ծածկել իրենց ամօթ մերկութիւնը. քթները բոնէիր, իսկոյն շնչները կփչէին, այնպէս էին տանջւել սովածութիւնից, իսկ կեղտի մէջ կորած մարմիններից ու շորերից զգւելի գարշահոտութիւն էր փչում։ Նրանք իրենց նման մարդկանց —անսահրտ հարուստների ճանկերում թրպըրտացող զոհեր էին, որոնք կորցրած ամեն ինչ, տուն-տեղ, այդի ու հող, ապրուստի. վերջին յոյս-ապաւէնը և ընտանիքի պատիւը, այնպէս կատարեալ սոված ու տկլոր գնում էին Թ. Շաղաք աշխատանք գտնելու վառ յոյսով, որ թէ իրանք ապրէին, թէ իրենց խղճուկ ընտանիքին մի կտոր չոր հաց ճարէին։ Հասնում են քաղաք։ Թորոսն ու իր ընկերները սև աշխատանքի բանւորներ են դառնում մի մեծ գործարանում։ Տանջւում են նրանք անասելի տանջանքներով. սոսկալի չարչարանքը նրանց ու նրանց հարիւրաւոր ընկերների մէջքն է ծոռւմ, սակայն 50-60 կոպէկ չնչին վարձագինը բաւականութիւն չէ տալիս նրանց առօրեայ պէտքերին. ընտանիքաւորների գրութիւնը մանաւանդ սոս-

կալի է դառնում, նրանք գուրկ են մնում ապրուստի ամենահամեստ միջոցից ու տանջւում են կարօտութեան մէջ։ Այս պայմաններում գործարանատէրը բանւորների վարձագինն է պակասեցնում, յայտարարելով՝ թէ գործերը վատ են գնում։ Բանւորները բոլորն էլ զգում են դրասարսափելի հետևանքները և գործադուլ են յայտարարում՝ խօսք մէկ արած։ Նրանք կարծում են, թէ դրանով կազդեն գործարանատիրոջ վըրայ, որ գէթ գրութիւնը նոյնը թողնէ, չէ՞ որ իրանք գեռ եղած պայմաններով չեն կարողանում բոլոր կենսական պահանջներին ծայրը ծայրին հասցնելով բաւարարութիւն տալ, ուր մնաց թէ առաջարկւած նոր պայմաններով բաւականանային։ Գործարանատէրը բանւորների գրութեան մէջ չի մտնում և նրանց բոլորին էլ պրձակում է ու հեռացնում իր գործերից։ Սովածների մի ուրիշ խումբ է բռնում նախկին բանւորների տեղերը գործարանատիրոջ պայմաններով և նախկին բանւորները սովածութեան են մատնում։ Անցնում են օրեր և շաբաթներ, անգործները տանջւում են սովածութիւնից և պարապ մնում։ Թորոսը հինգ օր շարունակ մի պատառ հաց չի գտնում բերանը դնելու, գժւելու չափ յուղուում է նա և որոշում, ինչպէս և վնի հաց գտնել։

Նա, որպէս գող կատու, վախը որտին և արիւն աչքերին, պտտում է մեծ և գեղեցիկ

քաղաքի լայն ու շքեղ, բազմամբոխ փողոցները՝ թուքը լիզելով կանգնում է երբեմն այս և երբեմն այն մեծ խանութի ցուցադրւած գեղեցիկ ու թանկագին առարկաներին նայում, ուրախանում, գարթանում, բայց երբ մտածում է, թէ դրանք իրենը չեն, նոր միայն զգում է մոռացութեան տւած, սովածութիւնից եօթ կտոր ու հաղար ձայն հանող դատարկ աղիքների կուչ ու ձիգերը և շարունակում է գնալը։ Մի ուրիշ գեղեցիկ խանութի գեղեցիկ զարդարանքներ են նրան գրաւում, կանգնում է նա նայում, նայում, պէլանում, շանում, բայց ամեն անդամ զգալով սովից գալարող աղիքների դաժան ցաւը, թողնում է, հեռանում և այդպէս շարունակ, շարունակ... Նրա զլուխն ուռչում է մտածելուց թէ ինչու մարդիկ կան, որ անբաւ հարստութիւններ ունին առանց դժւար աշխատանքների դիզած, իսկ ինքն ու իր նմանները տանջլում են ու չարչարւում տաժանակրի պէս և սոված են ու սոված.... Անցնում է նա մէկ, երկու տասն ու հարիւր նման և աննման խանութների առաջեկց և կանգ առնում մի խանութի առաջ, ուր հաց են ծախում։ Ամեն անդամ շքեղ խանութի դրան բաց ու խուփ լինելը դուրս է թողւած խանութում կարգին, շնորհով դաստորշամբարահացերի ու քաղցրաւենի ուտելեղէնների անուշ ու քաղցր հոտը, որն անմիջապէս ուժ-


վին թափով թորոսի դէմքին էր խփում, քթածակերը մտնում։ Թքակալում է նրա բերանը. տասնեակ անգամ կուլ է տալիս նա թուքը՝ լայն են բացւում նրա աչքերը, բայց գալարում են սոված ու կծկւած աղիքները. փորն է տրորում նա։ Նայում է ակնապիշ, նայում հիացած, սակայն, աւաղ, քթին չէ համում։ Նորէն նրա ստամոքսում գոռում գոչիւն են բարձրացնում գալարող աղիքները, և նա այլևս չի կարողանում զիմանալ։ Յանկարծ նա սիրտ է առնում, լայն են բացւում մարտող աչքերն ու առկայծում տարօրինակ կրակով. գաղանային ինչ որ սարսափելի միտք է յղանում նրա մթագնած ուղեղում։ Մի սատիւնով գցում է նա իրեն խանութ, խում մի մեծ կտոր հաց, պինդ սղմած կրծքին նոյնպիսի սատիւնով գուրս է թռչում ու փախչում։ Այնքան նա կարողանում է ճարպիկ գըտընւել, որ անմիջապէս խանութի դուռը շտապ ու արագ իր յետեկից ամենայն թափով վրայ է քաշում, որպէսզի դրանով արգելէ իր յետեկից վաղողին իրեն հասնելու, այն կտոր հացի պատառը ձեռքից առնելու։ Մի ակնթարթում խանութպանն ու խանութ հաւաքւած գնողները շշմում են, բայց անմիջապէս յետեկից ընկնում նրան բունելու։ Դա կատարւում է այնքան արագ, որ փակւող կամ աւելի շուտ վրայ վագող—ծածկւող դուռն այնպէս ուժգին ու շրմկալէն հարւա-

ծում է խանութպանի դէմքին և նա ուշագնաց
վայր է ընկնում խանութի շէմքին:

Բռնւում է թորոսը և բանտ տարւում: Դա-
տարանը հիմնում է կիսակենդան ու ջարդւած
դէմքով խանութպանի և նրա վկաների ճիշտ և
սուտ ցուցմունքների վրայ և որոշում նրա հա-
մար չորս տարւայ բանտային կալանաւորման
պատիժ: Նա մեղադրւում է բռնի փող պահան-
ջելու յանցանքի մէջ. և նա գնում է իր պատի-
ժը քաշելու, որ այնպէս դառն էր: որպէս լե-
զի, այնպէս տանջալից՝ որպէս դժոխքի սար-
սափը, թշւառների դրութիւնն է այս, կեանքն
է ծաղրում:

Ուժ, թշւառների կեանք:

Վ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0348229



Մամուկի տակ է և շուտով լոյս կտեսնէ
նոյն հեղինակի «Զարագործները եւ զոհերը»:

Դիմել Տփխիսի «Գուտտեմբերդ», «Գիր» և
«Նոր կեանք» գրավաճառներին և հեղինակին՝
Ростовъ н/Дону, Почтовая № 126

Հեղինակից գումարով գնողներին զեղջով է
արւում:

34735